

digitised by

AUCSOLUPOR DEALURTE THE AUSCHAL-BURDERS

46. SUPP - UNP TPRUL

1991	Bnilhu - Oqnusnu	Թիւ 7-8
1991	July — August	No 78



VOL. 65

A MONTHLY OF RELIGION LITERATURE AND PHILOLOGY OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



UUSELUAU

St. James Press, Jerusalem

WFUAPU4US

ԱՉԳԱՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴՐՈՅՆ ԱՌԹԻՒ

«Վէմ» հանդէսի (Յունուար–Մայիս) եւ ԻԳրդ (Յունիս–Սեպտեմբեր) թիւերուն մէջ, որոնց վերջինը այս օրերուս միայն ստացանք, յաջորդաբար երկու յօդուածներն են հրատարակուած այս խնդրին շուրջ, առաջինը՝ «Մտածումներ ազգի եւ դաւանանքի մասին». երկրորդը՝ «Մտածումներ ազգային միութեան եւ կազմակերպութեան մասին» խորագիրնե– րով։

Առաջինը գրուած է Պ. Նիկոլ Աղբալեանէ, երկրորդը՝ Պ. Սիմոն Վրացեանէ։

Երկու յօդուածներն ալ շահեկան են անտարակոյս, իբրեւ խորհրդածութիւններ՝ ազգապահպանութեան տեսակէտով հետզհետէ աւելի կենսական դարձող հարցի մը վերաբե_ րութեամբ, սրտցաւօրէն եւ նկատելի ձեռնհասութեամբ կատարուած։

Աղբալեան վերլուծական մտածումներ կամ դատողութիւններ կը ներկայացնէ Սփիւռքի Հայութեան ազգային ինքնութիւնը վտանգելու սպառնացող հոյլ մը պատճառներու մասին, որոնը օրէ օր կը շատնան մեր մէջ եւ շուրջը, ներքին կամ արտաքին վիճակներէ ծնունդ առնելով. ու անշուշտ շատ իրաւամբ, այդ կացութեան իբր լաւագոյն դարման կր gnight «ազգային գիտակցութեան պայծառացումը եւ նրա տարածումը զանգուածների մէջ»։ Ինչ որ կը խորհի թէ մեծագոյն չափով կրնայ կատարուիլ նախորդ սերունդներէ կատարուած ազդակներով, որոնք են եկեղեցին (անշուշտ կ'ուզէ ըսել ազգային եկեղեցին), լեզուն, դպրոցը, ազգային ինքնավարութեան մնացորդ իրաւակարգեր (Սահմանադրութիւն), ցեղային զօրաւոր զգացում, որ օտար կենսաձեւերու դէմ խորշանք ստեղծող յատուկ բարք եւ սովորոյթ կը շինէ, եւ այս ամէնուն հետ նաեւ նախ ծանօթութիւն ազգային պատմութեան որ ցոյց տայ նժդեհ Հայուն թէ ինքը զաւակ է տարբեր ազգի, ազգի՝ որ րնդունակ է ինքնուրոյն սեփական բայց եւ հանրօգուտ մշակոյթ ստեղծելու, ինչպէս ապացուցած է դարերու ընթացքին, եւ յետոյ զօրաւոր ազգային զգացում քաղաքական հասկցողութեամբ, որ կարենայ համոզել թէ «այդ մշակոյթը կարող է զարգանալ եւ արմատանալ մի միայն ազատ պայմաններու մէջ եւ սեփական հայրենիքում», զոր ունէր արդէն եւ զոր պէտք է ունենայ ազատագրուած դրութեան մէջ. եւ թէ հայր պէտք է «հայ մնայ եւ հայ պահէ իր սերունդը եւ եթէ ինքն ու իր ընկերները չկարենան ստեղծել ազատ հայրենիք nt պետութիւն` այդ սրբազան տենչը պէտք է փոխանցեն իրենց զաւակներուն»։

Աւելի մասնաւորելով՝ Պ. Աղբալեան յատկապես կանգ կ'առնե, ինչպես իր գրութեան վերնագիրը պիտի սպասել տար արդէն, «դաւանա^շնք թէ ազգութիւն» երկընտրանքի qunnuփարին առջեւ։ Իր դիտումը կը թուի՝ զգուշացնել՝ դաւանանքը ազգութենեն գերադաս համարելէ ազգային կեանքին մէջ. բան մը որ կը համարէ քայքայիչ ազգային արարք nz pt միութեան տեսակէտով։ Իր այս դատումին մէջ իր ակնարկը կ'ուղղուի անշուշտ հայութեան մայր զանգուածին, որուն իր ազգային եկեղեցիին մէջ մնալը արդէն «puluկան է իբր հիմք ազգային աւելի բարձր գիտակցութեան հասնելու եւ գիտակցական quunրոշման` օտար զանգուածներից», այլ տարադաւան հայերուն, որոնց համար ապազգայնացման կամ օտարացման վտանգը աւելի խիթալի է եւ գրեթէ աներկեւան, եթէ իրենց կրօնական պաշտամունքին մէջ հայ լեզուի անխափան կիրարկութեամբ, իրենց առտնին եւ րնկերային կեանքին մէջ եւս ազգային լեզուի եւ կրթութեան եւ աւանդութեանց պահպանումով եւ ազգային մշակոյթի հոգածութեամբ չչեզոքացնեն զայն։

Ու կը մտածէ թէ այս ամէնը, թէ՝ մայր զանգուածային եւ թէ՝ համազգի միւս հասարակութեանց մէջ կատարուելիք ազգային գիտակցութեան զօրացման եւ խորացման գործը, կը կարօտի կազմակերպուած աշխատանըի։

Կազմակերպուելիք այդ աշխատանքի գործին պարագաներն ու պայմաններն է որ ۹. Վրացեան կ'ուզէ քննել վերեւ ակնարկուած իր յօդուածին մէջ, որ «Վէմ»ի տասը կամ յատկապէս այդ տասնին վերջին չորս էջերը կը գրաւէ։

Իր տեսութեամբ, Աղբալեանի «մտածումները», թէեւ ճիշտ սկզբունքներ, «առաւելապէս տեսական բնոյթ ունին», ա՛յդ իսկ պատճառաւ ինքը հարկաւոր կը դատէ անոնցմէ գործնական եզրակացութիւններ հանել, «ընդհանուր եւ վերացական գաղափարին կեանքի գործօն բովանդակութիւն» տալու համար։ Խոստովանիլ հարկ է թէ առ հասարակ ուղիղ են իր խորհրդածութիւնները եւ ցուց– մունքները, երբ, ազգին իր «ուրոյն անհատականութիւնը» չկորսնցնելու համար թափած կամ կատարած միահամուռ ճիգը մատնանշած ատեն, կը ձգտի ներկայացնել «դրական ու շինարար երեւոյթներ» եւ « բացասական ու քայքայիչ գործօններ»։ Բայց մեր խորին համոզումն է թէ Վրացեան կը սխալի մեծապէս, երբ այդ վերջիններուն` այսինքն ազգային ընդհանուր միասնականութիւնը «տկարացնող ազդակներ»ուն, ոչ միայն ի գլուխ կը յիշէ դաւանական խտրականութիւնը ազգին մէջ, այլ մանաւանդ խտրական այդ ոգիին արծարծող կը ձգտի ցուցնել հայ եկեղեցականութիւնը։

Անշուշտ ամէն հոգեւորական, ինչպէս եւ հաւատացեալ, խղնի եւ համոզումի պարտականութիւն ունի ջատագով կանգնելու իր եկեղեցիին դաւանական ըմբռնումին. բայց եկեղեցին, որուն կրօնական լայնախոհութիւնը հանրածանօթ է եւ անվիճելի, ո մեր hp 115 պաշտօնեաները եւ ոչ հետեւողները չէ քաջալերած բնաւ որ մտածեն թէ արտաքոյ Հայաստանեայց հաւատքին «չիք փրկութիւն»։ Մեր վերջին հայրապետներէն մին (Մակար U.) Ł որ պաշտօնական առիթով մր յայտարարած է թէ «Ամէն եկեղեցի իր հաւատքովը կր փրկուի»։ Այդպիսի ընթացը մը հակասութիւն պիտի ըլլար եկեղեցիի մը համար, որ իր պաշտամունցին մեջ սա տեսակ խօսը մը ունի. «Ընդ ամենայն տեղիս քրիստոնէութեան, ուր եւ կարդան զանուն Տեառն սրբութեամբ. Տէր աղօթիւք նոցա եւ բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի»։ Եւ յետոյ մեր եկեղեցին, սահմանուած պարագայից մէջ, կը Ganyt հերե_ տիկոսութիւնները եւ հերետիկոսնե'րը միայն եւ ոչ թէ այն եկեղեցիները որոնց դաւանութեան յարած են իրենց մայրենի եկեղեցիեն անջատուած հայերը։ Պարզ է ուրեմն pt տարադաւան ազգակիցներու հանդէպ էր երբեմն զգացուած գաղջութիւնը կամ խորշանքը hp խորքին մէջ հետեւանք էր ո՛չ թէ կամ ո՛չ այնքան դաւանական որչափ ազգայնական նկատումներու։

Վէպ չէ եւ ո'չ ալ առասպել երբ կ'ըսուի թէ ազգային եկեղեցիին ուրացումը ապազգայնացման դուռը կը բանայ մեր առջեւ. այդ տխուր ճշմարտութիւնն է որ հաստա– տուած է եւ կը հաստատուի բրիստոնէութեան Ե. դարէն մինչեւ դեռ մեր օրերը։ Եւ պատմաբան լինելու հարկ չկայ գիտնալու համար թէ նախ Բիւզանդական եւ ապա Հռով– մէական մոլեռանդութիւնը քանի^{*} հազար ու բիւր հայեր կորզելով իրենց ազգային եկե_ ղեցւոյն ծոցէն՝ սուզած ընկլուզած է զանոնք իսպառ օտարացումի վիհին մէջ։ **NL** wju աղեխարշ իրականութեան առջեւ է որ ազգային զգացումը ինքզինքին pnj ហារយេថិ tp երբեմն ըսել. «արտաքոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ չիք Հայութիւն», եթէ, ոչ ພິເຊິ່ງກາງທ իբրեւ ճշմարտութեան վճիռ` այլ իբրեւ բողոբախառն կսկիծի արդար ձայն մը։

Հիմակ, ա'յս ձեւով նոյն իսկ եղած այդ կարգի արտայայտութիւն մը կը հաւատանք թե ժամանակավրեպ պիտի ըլլար արդարեւ, քանի որ շնորհիւ Մխիթարեանց գրական եւ կրթական արդիւնքներուն, որոնք առաջ եւ աւելի մեր պարունակին մեջ պտղաբերուած են, ի վերջոյ բուն կաթոլիկ հայութեան մեջ եւս սկսաւ արթննալ ազգային ոգին, ա'լ աւելի հրահրուած անտարակոյս ամբողջ ազգին մեջ ժամանակին հետ եւ պարագաներէ արծարծուած հայրենասիրութենեն, բայց դարձեալ ճիշդ չենք գտներ ատոր համար բոլորովին թեթեւցած խղճմտանքով նայիլ հարցին վրայ եւ ազգապահպանման տեսակէտով Հայաստանեայց Եկեղե– ցիին դիրքը եւ իրմէ սպասուած դերը նուազեցնել իջեցնել տարադաւան միւս հայ եկե– ղեցիներու (եւ ոչ թէ «յարանուանութեանց») դիրքին եւ դերին։

Ինչ որ Հայ Եկեղեցին ցարդ կատարած է Ազգին կեանքին մեջ իբրեւ ազգային qnnð եւ վստահ ենք թէ պիտի կարենայ տակաւին կատարել՝ պահանջքն է իր հոգւոյն։ Կրնա՞նք արդեօք միեւնոյն բանը նոյնքան յստակատեսութեամբ ըսել միւսներուն համար եւս, երբ գիտենը թէ այս երկու եկեղեցիներն ալ, կաթոլիկն ու բողոքականը միանգամայն, իբրեւ կրօնական հաստատութիւններ, իրենց ներշնչումը կը ստանան ուրիշ ոգիէ մը, np, hus որ ալ ըսենք, խոժոռ կը նայի մերինին։ Մասնաւորելով հոս մեր խօսքը՝ կաթոլիկո համար, չենք կրնար հոս չյիշել արտակարգօրեն անիրաւ եւ անբանաւոր՝ այն՝ ճիգը կաթոլիկութեան qnn կ'ընէ ան շարունակ իր մարդորսութեան ծուղակն ինկած տկար ժողովուրդները uuuuqգայնացնելու համար․ այդպիսիներուն հանդէպ իր առաջին գործն է սրբել ջնջել wünlig ցեղական անունը եւ անգոյ ազգութեան մը պիտակին տակ ազգայնապէս կորսնցնել զանոնը։ Պատերազմեն ոչ շատ առաջ, Գամիրքի եւ Կիլիկիոյ միջասահման երկրամասին մէջ phy չէին ուղղակի լատին միսիոնարներու ձեռքերով կաթոլիկացուած դժբախտ այն հայերը, որոնց շատ տեսնուած էր նոյն իսկ "Հայ"-կաթոլիկ անունը, պարզապէս "Լատին" կոչելով

ազգայնապես իսպառ փճացնելու համար անոնց ցեղական ինքնութիւնը։ Այդպիսի եղկելիազգայանորու ինքակ մըն ալ ահա հոս իսկ մեր աչքին առջեւ, կրօնի անունով լարուած չարաշահ ուղկաններու մեջ ցանցնուած։ Ու մինչ ազգային ծեսի եւ լեզուի ազատութեան ympnihu սկզբունքները կը կոխոտուին այսպէս հայ կեանքին մէջ նոյն ինքն կաթոլիկ եկեղեցիին կողմէ, հայ կաթոլիկ եկեղեցիին իշխանութիւնը, իր պատրիարը-կաթողիկոսութեամբը, hp առաջնորդներովը, միաբանութիւններովը եւ մտաւորականներովը չի կրնար pnnnp pupaրացնել եւ թումբ կանգնիլ հոգեւոր կեանքի մէջ գործուած ազգայնական վանտայութեանց դեմ, հասկցնելու համար ուր որ պէտք է որ եթէ խղնի (?) գործ t hp եկեղեցին BL դաւանութիւնը լըելը, գերազանցապես անխղճութեան արարը է՝ մարդու մը իր արիւնն **BL** ազգը ուրանալ բռնադատելը։

ազգը ուրասալ բուղչության ազգայնական տրամաբանական պիտի ըլլար իր ազգայնական պարտա– Չենք կրնար ըսել թէ ո՞րչափ տրամաբանականութիւն պահող Մարմինի մը գիծին վրայ կանութեանց հանդէպ այնքան չէզոք կրաւորականութիւն պահող Մարմինի մը գիծին վրայ դնել Հայաստանեայց Եկեղեցին, որուն` մեզի համար մեծագոյն փառքը եւ այլոց համար մեծագոյն մեղքը իր ազգապահպանութիւնն է եղած։

Ըսե՞նք տակաւին թէ մեզի համար ցաւագին անակնկալ մը եղաւ տեսնել որ Վրացեանի նման միտք մը իր այս յօդուածին մեջ թոյլ տուած է իր գրչին ակնարկութիւններ գործածել նախ հայ եկեղեցականութեան կարեւոր մէկ այնքան wawnghy. մասին ներկայի մտաւորական ու տնտեսական թշուառ վիճակին համար, զոր սակայն աւելի արդար պիտի ըլլար բացատրել իբրեւ հետեւանք պատմական դժբախտ հանգամանքներու եւ մեր եկեղեցա_ կան իրաւակարգին մէջ մուտ գործած չափազանց ժողովրդավարական սկզբունքներու. եւ յետոյ Բարիզի Հոգեւոր Հովիւին եւ Հայ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան նկատմամբ, որոնց առաջինը իր «ղարիպ տէրտէր»ի օրերէն մինչեւ եպիսկոպոսական կարգի այժմեան Shahawպես փլատակ ծերութեան մեջ ճշմարտապես բարի հոգւով եւ գործօն նուիրումով արդիւնաւորած է միշտ իր ազգային եւ կրօնական կոչումը իր կարողութեանց սահմանին մէջ, եւ երկրորդը՝ մենք գիտենք թէ ի'նչպես ըրած է եւ կ'ընէ իր բովանդակ կարելին երկրին տեղական պայմաններուն եւ պետական օրէնքներուն թոյլտուութեան չափով պահպանե_ լու կամ երկարաձգելու համար գաղթական հայութեան ազգային կեանըն ինքնութիւնը nL այդ մեծ ոստանին եւ անոր շրջակայից մէջ։

Որովհետեւ Պ. Վրացեան մերոնց մասին այս նկատողութիւնները կ ընէ միշտ ntuհիմնուելով մեզի՝ մեր յանդիմանութեամբ հայ կաթոլիկ կղերին, մենք թոյլ կուտանք գաւառական եւ այլ պաշտօնավարութեանց երկար փորձառութեան վրայ` դիտել រោយព្រារ անկեղծօրէն թէ պախարակուած այդ "խեղն" հայ կղերը թէ հոգեւոր pt' կեանքի եւ ազգապահպանութեան տեսակէտով մանաւանդ հայկական կամ հայաբնակ վայրերու մէջ 200 աւելի գործ կը կատարէր քան միւսները, թէեւ ասոնցմէ ոմանք իրենց գրպանին sty. տիտղոսներով ունէին աստուածաբանական վկայականներ եւ ուրիշներ գրական ու գիտական qnun uty միակ եւ յաճախ օտար լեզուներու ուսմամբ ճոխացած։ Սեբաստիոյ շրջանին nup կաթոլիկ, մեծագոյն եւ հարուստ հայ գիւղն էր Բրգնիկ, Վարուժանի ծննդավայրը, կային բազմաթիւ վարդապետներ եւ մայրապետ քոյրեր հաստատութիւններով միասին. բայց, qhiինչպէս բանաստեղծն ինքն իսկ ափսոսալով կ'ըսէր յաճախ, ան «շատ հեռի էր այդ pni ղերուն մեջ որեւէ կերպով առաջիններեն ըլլալէ»։ Իրերու վիճակը յոռեգոյն էր քաղաբին, Սեբաստիոյ մէջ, ինչպէս եւ ի Թոբատ, Մարզուան եւ Ամասիա եւ այլուր, nup կա'մ կղերովը իրենց ամբողջ Հայ–կաթոլիկ արքեպիսկոպոսներ եւ եպիսկոպոսականներ անոնց դպրոցնելատին հոգեւորականներուն մեծարանքի սպասարկութիւն կ'ընէին, կա'մ րուն համար հայ աշակերտներ գտնելու հոգերով աւելի կը տաղտապեին։ Դրութիւնը նոյնն եւ մեծածախս էր նաեւ Պարտիզակի մէջ. եկեղեցւոյ, դպրոցի, մայրապետանոցի եւայլն մսխումներուն միակ արդիւնը եղաւ այդ գիւղեն ապագայ բանի մը մեծարժեք Մխիթարեան-Թորոսեան եւ Հ. ներ հանելը՝ պիտի ըսէինը, եթէ անոնց ամենէն կարեւորները, Հ. กเก-Հացունի, աւելի կանուխ մտած չըլլային Ս. Ղազար, ու եթէ Հ. Արսէն Ղազիկեան ղակի ազգային վարժարանեն փոխադրուած չըլլար հոն։

Այս այսպէս լինելով ըստ մեզ, չենք գիտեր թէ ի՞նչ հրաշք տեղի ունեցած է Բարիզի մէջ այդ տեսակէտով՝ Պ. Վրացեանի վրայ այնքան տպաւորիչ ազդեցութիւն մը գործած ըլլալու համար ի նպաստ հայ–կաթոլիկ կղերին եւ ընդդէմ մերոնց։ Եթէ կ՛ակ– նարկուի Մխիթարեանց կողմէ Սեվրի մէջ վերաբացուած Մուրատեան վարժարանին, աւելորդ թող չնկատուի զգացնել թէ այդ գեղեցիկ ձեռնարկը, ինչպէս եւ Վենետկոյ եւ Պոլսոյ Գատը գիւղի եւ Բանկալթիի մէջ իր համանմանները եւ, չափով մըն ալ, պատերազմեն առաջ Տրապիզոնի եւ կարծեմ Մուշի մէջ եւս դեռ գոյութիւն ունեցող դպրոցները, ամէնքն ալ ծնունդ էին եւ են մեծ Սեբաստացիեն երկնուած բոլորովին տարբեր հոգիի մը, որուն երկար ատեն անընդունակ եւ դեռ մինչեւ երէկ նոյն իսկ ներհակ մնաց իր եկեղեցական եւ ազգային ուղղութեամբը Սագըզ–Աղաճի՝ այսինքն իր գոյութիւնը ամենեն աւելի Հասունով շեշտուած պատրիարքարանեն ստացող հոգեւորականներու այն գործարա– նաւորութիւնը զո՛ր՝ ամէնեն աւելի՝ «Հայ–կաթոլիկ կղեր» ընթացիկ կոչումին տակ ճանչցած է Ազգին հասարակաց զգացումը։ Ու մենք թոյլ կուտանք մեզի տակաւին նկատե– լու թէ Բերայի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» կրթարանն իսկ, զոր տեսած ենք Վարուժանի տեսչութեան ատեն, հակառակ ըստ երեւոյթին այդ պատրիարքարանին ենթարկեալ ըլլալուն, լապես տարբեր նկարագիր ուներ, իբրեւ վերանորոգեալ վերջամնացութիւնը անմոռանալի «Համազգային»ին, որուն մէջ ապրած Պէշիկթաշլեանի շունջը կարելի չէր անշուշտ մէկ

Uju ամtնը ըսելով, մենք դիտում չունինք բնաւ ուրանալու հայ արիւնը եւ հայ հոգին ոչ հայ-կաթոլիկ կղերին եւ ոչ իր հասարակութեան, այլ մատնանշելու իրականութիւն մը միայն, ազգայնականութեան գաղջութիւնը, որ կը խորհինք թէ ամէն բանէ աւելի հետեւանքն է Հռովմէական ապազգայնացնող, եթէ կ'ուզէք՝ գերազգայնական ոգւոյն որ արդարեւ գործած է իրենց մէջ, եւ որուն դիմակալելը սակայն անտեղիտալի հարկն է այլեւս ժամանակին, եւ պահանջը, ներկայիս մանաւանդ, ազգային առողջ գիտակցութեան։ Մեր իղձն ու մաղթանքն է անկեղծօրէն որ այդ վիճակը անցեալին պատկանող երեւոյթ մը լինի յետ այսու, ու, տոգորուած Մխիթարեանց ոգւով, Հայ-կաթոլիկ կղերը ջանադիր

Այդ գործը որ մեր բաժինին` այսինքն ազգին մայր եւ մեծագոյն զանգուածին մեջ եւս անտարակոյս նոր պէտքերու համեմատ կը կարօտի կազմակերպական առաւելագոյն աշխատանքի, ինչպէս ցարդ` այսուհետեւ եւս կրնայ կատարուիլ յաջողութեամբ, եթէ լուրջ մտադրութեամբ մօտենանք իրեն եւ ընտրենք իրեն համար նպատակայարմար միջոց– ները։

Λι hnu, ակամայ բայց հարկադրեալ ջեղումէ մը վերջ կը հասնինք ահա բուն մեր ըսելիքին:- Այդ միջոցները մեկէ շատ աւելի են անշուշտ, բայց, մեր անխախտ համոգումով, անոնցմէ առաջինն ու կարեւորագոյնն է Եկեղեցին, Հայ Եկեղեցին։ Հակառակին մտածումը անխորհուրդ եւ անարդար բան մը պիտի ըլլար միանգամայն։ Անխորհուրդ, որովհետեւ, Սփիւռքին համար մասնաւորելով մեր խօսքը, Ազգին ներկայ անհայրենիք եւ անպետական վիճակին մէջ, թէ' իրապես եւ թէ' իրաւապես ոչ մեկ ուրիշ ոյժի մը շուրջը պիտի կարելի ըլլար խմբել ազգին կեանքը, երբ օրը օրին աւելի կը տեսնենք թէ ամեն երկրի մէջ քաղաքական հայեացքը ի՛նչ ուղղութիւն կը ստանայ փոքրամասնութեանց ինքնութեան հարցին վերաբերմամբ. եւ անարդար` որովհետեւ վերջապես խղճի եւ իրաւունքի դեմ է Ազգը բաժնել անջատել իր Եկեղեցիեն, որ անոր դայեակն ու ծնո՛ղը նոյն իսկ եղած է, քանի որ ի՛նք անոր մէջ կազմած է ազգային գոյութեան եւ կոչումին գիտակցութիւնը, առանց որուն ժողովուրդ մը չի կրնար ազգ դառնալ եւ տեր մնալ իր ազգային զգացումին։

Աղբալեանի նկատողութիւնը թէ «Եկեղեցին ազգայնութեան կրօնական արտայայտու– թիւնն է»՝ ոչ մէկ ուրիշ Եկեղեցիի համար այնքան ճիշդ է որքան Հայաստանեայց Եկեղեցւոյ համար։ Ոչ թէ «չենք ուզում», ինչպէս կ'ըսէ Վրացեան, այլ "չենք կրնար" «ուրանալ բնաւ Հայոց Եկեղեցու կատարած դերը մեր անցեալ պատմութեան ընթացքում։ Հայոց Եկեղեցին եղաւ Հայութեան պահպանման գլխաւոր ազդակներէն մէկը, մանաւանդ այդ մռայլ ժամանակներում, երբ ազգային–պետական գործօնը վերացուած էր։ Նոյն այդ Եկեղեցին ստեղծեց հարուստ ազդային մշակոյթ՝ իր մէջ խտացնելով հայկական հանճարի ստեղծագործական թափը»։

Այո, բայց ընդունիլ հարկ է թէ միայն հեռաւոր անցեալին մէջ չէ որ Հայ Եկեղե– ցին կատարեց այդ դերը։ Մինչեւ մեծ պատերազմին նախընթաց օրը անիկա իր այդ դերին մէջ էր. հայկական եւ հայաբնակ գաւառներու հայութիւնը անոր շուրջը եւ շունչին տակ միշտ պահեց իր ազգային կեանըը։ Տանկաստանի Հայութիւնը 1860ական շրջանի իր վերածնութիւնը անոր հովանիին տակ երկնեց, որովհետեւ Սահմանադրութեան հիմնադիր–

digitised by

άδραια μմբակը իմաստութիւնը ունեցաւ հասկնալու թէ ուրիշ կերպով չէր կրնար ըլլալ ազգապահպանութեան գործը։ Անոր մէկ հնոցէն, հայկական վանքէ մըն էր վերջապէս որ մեծ Սեբաստացին տարաւ կանթեղ մը` Եւրոպայի մէջ վառելու համար իր փարոսը։ Թիֆլիսի Ներսէսեանէն եւ էջմիածնի ճեմարանէն մինչեւ Կ. Պոլսոյ Կեդրոնականը եւ Պէրպէրեանը, որոնց մէջ թրծուեցան վերջին դարու հայ կեանքի մեծ արժէքները, Ամրտոլէն, Վարագէն ու Հայաստանի միւս վանքերէն մինչեւ Արմաշ, չյիշելով դեռ Կովկասինները, որոնց ամէնուն մէջ կայծեր կային միշտ Սիւնեաց Վարդապետանոցի հին կրակետղերեն, ամէն տեղ, ազգային-կրօնական իտէալը այսինքն Հայաստանեայց Եկեղեցւոյ մտածումն ու սէրն էր որ ոգեւորեց սիրտերն ու միտքերը, ազգային կեանքը մշտնջենաւորելու համար։

Այսօր ալ. այս աւելի քան երբեր «մռայլ ժամանակներում», երբ ազգային–պետական գործօնը գոյութիւն չունի գէթ Սփիւռքի մէջ, միայն Եկեղեցիին հովանիին տակ կրնայ իրականանալ ազգային իշխանութեան մը գաղափարը։- Կղերապետութեան վրայ չէ՝ երբեր որ կը խորհինը, մեր ժողովուրդը բարեբախտաբար ընդունակ չէ, չէ եղած եւ պէտը չէ լինի այդպիսի վարչութեան մը. բայց չենք կրնար ըմբռնել նաեւ Պ. Վրացեանի մատնանշած «բացարձակապես աշխարհիկ», այսինքն կրօնական տարրը դուրս նետուած (կամ այլամերժօրէն իր դաւանական եւ ծիսական պարտականութեանց մէջ արգելափակուած) վարչութիւն մը, զոր ո'չ արտաքին պայմանները պիտի թոյլատրեն եւ ո'չ ժողովուրդին խիղճը ընդունի։ Իրաց գոյավիճակը պէտք է պահուի այնպէս ինչպէս էր ցարդ, սկզբունքին ute Gnja, բայց մանրամասնութեանց մէջ նորոգեալ, այսինքն նոր պէտքերուն պատշանեցուած Gnp կերպերով. Ազգային Եկեղեցւոյ դրօշին ներքեւ։ Համազգի միւս հասարակութիւններն UI. կրնան նոյն կերպը իրագործել, զուգընթացապէս կամ նմանողաբար, եթէ կը հաճին, pujg միշտ իրենց եկեղեցիներուն միջոցաւ, ցորչափ կրնան այդ եկեղեցիները պահել իրապես huj:

Աններելի սխալ մը պիտի ըլլար վերջոտնել կամ անաւագել Հայաստանեայց Եկեղեցին իր ցարդ ունեցած դերէն ու դիրքէն. անոր հետ կապը «բաւական է իբրեւ հիմք ազգային աւելի բարձր գիտակցութեան հասնելու եւ գիտակցական զատորոշման համար՝ օտար զան– գուածներից», կրկնելով Պ. Աղբալեանի վերեւ յիշուած դատումը։

Ցանկացուած ազգային պետութիւն մը ունեցած ատեննիս միայն արդարութիւն պիտի ըլլար թերեւս խորհիլ ուրիշ ուղղութեան մը վրայ։ Բայց մենք կը՝ մտածենք՝ միշտ թէ նոյն իսկ այդ պարագային ազդին՝ համար՝ անվնաս՝ պիտի՝ չըլլար՝ բոլորովին՝ ժխտական կեցուածը ունենալ Ազգային Եկեղեցիին հանդէպ։ Այդ տեսակէտով իմաստութիւնը չպակ– սեցաւ բնաւ Պալքանեան նորակազմ պետութիւններուն 🗕 յունականին, պուլկարականին, ռումանականին եւ սերպականին – որոնը շարունակեցին իրենց Ազգային Եկեղեցիները, գոյութիւնը՝ որոնց միջոցաւ էր որ ժողովուրդը երկար ատեն պահեր էր իր ազգային գերութեան շրջաններուն։ Պարագան աւելի կամ նուազ չափով կամ ձեւով նոյնն է եւրոպական աւելի հին եւ մեծ պետութիւններուն, անգղիականին, ֆրանսականին, պելճիգականին, իտալականին եւ դեռ մինչեւ երէկ ռուսականին, գերմանականին, աւստրիականին եւ սպանիականին համար, որոնցմէ ոմանը, հակառակ Եկեղեցւոյ հետ իրենց պաշտօնական կապը խզած ըլլալնուն, չդադրեցան բնաւ նախամեծարութեան զգացում տածելէ եւ վերաբերմունը ցուցնելէ իրենց երբեմնի ազգային եւ այժմ ժողովուրդին մեծամասնութեան յարած Եկեղեցիին նկատմամբ։

Պ. Վրացեանի կողմէ իր Եկեղեցիին մասին յայտնուած այս ann st մտայնութիւնը սակայն։ Համոզուեցանք այդ մասին, երբ վերջերս կարդացինը «Արեւ»ի մէջ՝ արտատպուած իր մէկ գրուածքը, ուր կը պատմէր տարիներ առաջ տուած իր մէկ այցելութիւնը Lthwuիրենց տանի Հայոց։ Ասոնցմէ խումբ մը երիտասարդներ, ազատագրուած Հայաստանի մասին հաղորդուած տեղեկութիւններեն խանդավառ, երբ ի մէջ այլ խօսքերու կ'ըսեն թե hattg համար թերեւս լաւագոյն պիտի ըլլար Մայրենի Եկեղեցիին գիրկը դառնալ՝ իրենց հայութիւնը կատարեալ ըլլալու համար, ինքը, այդ պայմաններուն մէջ եւ այսպիսի կամ այնպիսի տպաւորութիւններով կատարուած արտայայտութիւն մը փոխանակ լուռ ծպիտով մը միայն դիմաւորելու, կը պատասխանէ սակայն. «Փոյթ չէ, կաթոլիկ եղած լինելը ungtip մը չէ այդ բանին»․ այսպիսի խօսը մը պիտի կարենար թերեւս տանելի nptet DITMI ուրիշ տեղ կամ պարագայի մեջ, բայց ոչ հոն՝ ուր սրանչելի գաղութ մը չարաչար hubսուեցաւ Ազգին համար, միայն եւ մի միայն կաթոլիկութիւնը ընդունած լինելու հետեւանքով։ Իր ազգին պատմութեան եւ կեանքի քաջահմուտ խորհող մը եւ գործիչ մը պէտք չէ՞ր արդեօք որ խնայէր այդպիսի պատրանք մը` իրենց ազգային քնած զգացումին մէջ յանկարծ արթնցած այդ տղոց, որոնք թերեւս գիտէին ալ թէ ի՞նչ տխուր եւ գարշ պայ– մաններու մէջ իրենց նախնիք բռնադատուեր էին ուրանալու իրենց Մայրենի Եկեղեցին։

Յառաջ բերինք հոս այս մանրադէպը, ըսելու համար պարզապէս թէ Հայ Եկեղեցւոյ վէրաբերմամբ սխալ կարծիքի մը իր մտածողութեան մէջ վաղուց ծալք կազմած ըլլալուն համար է որ Պ. Վրացեան չէ յաջողած Պ. Աղբալեանի «առաւելապէս տեսական բնոյթ» ունեցող վերլուծական դատումներէն «գործնական եզրակացութիւններ հանել». մինչ եթէ լաւ միտ դնէր Հայ Եկեղեցւոյ մասին անոր ա'յնքան գեղեցիկ եւ նշգրիտ կերպով յայտնած զոյգ մը նկատողութիւններուն, պիտի յանգէր մեր եզրակացութեան. այսինքն Հայ Եկեղեցիին չմերժել պատմականօրէն եւ տրամաբանօրէն իրեն վիճակուած դերն ու դիրըը ներկայ Հայութեան ազգապահպանման գործին մէջ։

Այս սկզբունքը իբրեւ կեդրոնական կէտ անգամ մը ընդունելէ` այսինքն իբրեւ կրօ– նական կամ եկեղեցական Հասարակութիւն միայն ապրիլ կարենալնիս հասկնալէ վերջ. դժուար չըլլար ճշդել գործին կազմակերպական մանրամասնութիւնները, ի նկատի ունե– նալով ազգային ոգիին պահպանութեան եւ բարգաւանման պահանջը եւ տեղական պետական օրենքներուն ըստ կարելւոյն պատշանելու հարկը։

Եկեղեցի, դպրոց, ազգ, բարեսիրական կեանք, ազգային մշակոյթ՝ սեպհական լսարանով, Հրատարակչականով, թատրոնով, եւայլն. ասոնք պէտք է ըլլան ազգապահպանումին միջոցները Սփիւռքի մէջ, ինչպէս Պ. Թէքէեան շատ լաւ ներկայացուցած էր «Արեւ»ի մէջ իր ուշագրաւ խմբագրականներով։ Պահել ինչ որ ունէինք ցարդ, եղածը նորոգելով եւ աւելի զարգացնելով զայն նոր միջոցներով եւ կերպերով. իսկ ինչ որ չունէինք ցարդ, բայց զորս ունենալը անհրաժեշտ է՝ ջանալ ձեռք բերել եւ աւելցնել եղածին վքայ։ Ազգային իշխանութեան ամէն շրջանակ, իր եղած երկրին մէջ, պարտի ընել ամէն ջանք նախ համերաշխութեան եւ սիրոյ մթնոլորտ պատրաստելու եւ յետոյ լծուելու համար գործի. Եգիպտահայութիւնը կրնայ այս մասին օրինակ հանդիսանալ ամբողջ Սփիւռքին. չեն պակսիր իրեն` ո'չ խորհող մարդիկ, ո'չ նիւթական միջոցներ, ո'չ բարիկամեցողութիւն

Ընել այս ամէնը` անհրաժեշտ է որպէս զի Հայութիւնը, իբրեւ ինքնուրոյն ժողո– վուրդ եւ ազգ, չկորսուի օտարութեան մէջ, ու չբաժնուի բնաւ իր բնիկ հայրենիքին գաղափարէն, որ իր իտէալը պէտք է ըլլայ։

Սփիւոքի Հայութիւնը պէտք է վարժեցնել ինքզինքը պանդուխտ նկատելու ո'ւր որ ալ եւ ի'նչ պայմաններու մէջ ալ որ ապրի։ Չկորսուելու համար առաջին անհրաժեշտ զգացումն է ասիկա։ Աստուածաշունչին մէջ սրտագրաւ կէտ մը կայ այս զգացումը ներկայացնող։ Մովսես, Իօրայէլի մեծ առաջնորդը եւ վերանորոգիչը, որչափ կրօնական՝ նո'յնքան եւ քաղաքական գործիչ, իր ժողովուրդը դէպի իր նախնեաց կամ Աւետեաց երկիրը առաջնորդած ատեն, առաջին քայլափոխին, երբ իր անդրանիկ զաւակը ունեցաւ, "Գերսամ" (= Պանդուխտ) կոչեց զայն. իր միտքն էր հասկցնել ժողովուրդին թէ հայրենիրին յոյսը չթառամեցնելու համար իր հոգւոյն մէջ՝ պէտք է գիտնար ու յիշէր միշտ թէ պանդուխտ է ինքը իր գտնուած երկրին մէջ։

Այս պատկերը մեզի' ալ պետք է խօսի։

Tudopniphid.

p. b. q.

Սիոնի 1939 Փետրուարի թիւին մէջ տպուած այս խմբագրականը հոգելոյս Թորգոմ Պատրիարը Գուշակեանի վերջին ձայնն էր, նոյն ամսուն 10ին իր անակնկալ վախճանումէն առաջ տպարան յանձնուած։ Յիսուն տարիներ յետոյ, մեր օրերու ազգային եւ եկեղեցական շարժումներու պատկերին շրջանակէն ներս այդ խօսքը իր այժմէական թելադրանքը ունի։ Արդարեւ "Այդ պատկերը մեզի' ալ պէտք է խօսի"։

energen in anderenergen auf immensen einen einen einen beiden eine einen einen beiter beiter

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Ц.

Յիսուսի Այլակերպութեան պատմութեան մէջ, եւ Այլակերպութեան որեւէ մէկ նկարի մր երբ կը նայինը, մեզ տպաւորող առաջին տեսարանը, առաջին պատկերը երեք դէմքերն են.

- Լոյսի մէջէն նառագայթող Յիսուսը,

- Անոր աջին՝ Մովսէս մարգարէն,

- եւ ձախին` Եղիա մարգարէն,

եւ անմիջապէս կ-անդրադառնանը որ խորհրդաւոր նկար մըն է այս։ Խորհրդանշական (սէմպօլիք) պատկեր մըն է։

Եւ արդարեւ,

Մովսէս կը խորհրդանշէ Աստուծոյ օրէնքը, Աստուծոյ կամքը, Աստուծոյ պատուիրանները.

Եղիա մարգարէ կը խորհրդանշէ Աստուծոյ օրէնքը՝ գործադրողը, Աստուծոյ կամքին հնազանդողը, Աստուծոյ պատուիրաններուն համաձայն ապրող նախանձայոյզը։

Եւ այս երկուքին մէջտեղ կանգնած է՝ ճառագայթող Յիսուսը, որ կը խորհրդանշէ աստուածային շնորհը, որ ով միայն կարելի է լուսաւորել ճանապարհը եւ ըմբռնել Աստուծոյ օրէնքներուն, պատուիրաններուն իմաստը, խստութիւնը եւ անհրաժեշտութիւնը։ Որո վ միայն կարելի է կեանքը ապրիլ գոհունակութեամբ, ներդաշնակութեամբ, սիրով, հաւատքով եւ յոյսով։

R.

Երկրորդ մակարդակի, երկրորդ բլանի վրայ, Յիսուսի Այլակերպութեան պատմութեան մէջ, եւ այլակերպութիւնը ներկայացնող որեւէ մէկ նկարի մը մէջ, գլխաւոր այս երեր դէմբերուն մօտիկ, կը գտնենք երեք աշակերտները Յիսուսի (Յակովբոս, Յովհաննէս եւ Պետրոս), որոնց հետ Յիսուս լեռ բարձրացած էր առանձնանալու եւ աղօթելու։

Պայծառակերպութեան այս հրաշալի տեսիլքին դիմաց կանգնած, ընկողմանած, աշա– կերտները զմայլանքով կը դիտեն տեսիլքը, մինչեւ որ, քունէ արթնցածի պէս, կը սթա– փին, եւ իրենց մօտիկ կը գտնեն Յիսուսը` առանձինն։

Եւ այն ատեն, Պետրոս՝ հիացմունքէն դրդեալ, կ'ըսէ. "վարդապետ, բարւոք է մեզ աստ լինել։"

Այստեղ մնանը։

Մովսէսին եւ Եղիային համար ալ տեղ կը պատրաստենը, տաղաւար կը շինենը։

Եւ ամպին մեջեն կը լսեն ձայնը, որ կ ըսէ. "Դա է Որդին իմ սիրելի։" Անոր մտիկ ըրէր։

9.

Այլակերպութեան այս պատմութեան եւ նկարին երրորդ մակարդակը` երրորդ բլանը կայ։

Ասիկա՝ հոգիի եւ մտքի աչքերով կարելի է տեսնել։

Բայց 1500 թուկաններուն ապրած՝ (1483—1520) Իտալացի նշանաւոր նկարիչներէն մէկը, Ռաֆայէլ Սանզիօ, ամբողջացնելու համար Այլակերպութեան պատմութեան եւ տեսիլքին իմաստը, հոգեւոր նշանակութիւնը, "Այլակերպութեան" անունով իր նկարին մէջ, լերան կատարին տեղաւորելէ յետոյ երեք գլխաւոր դէմքերը (Յիսուս, Մովսէս եւ եղիա) եւ անոնցմէ ճառագայթող լոյսին մէջ՝ ներկայացնելէ յետոյ հիասքանչ երեք աշակերտները, ամբողջ լերան մարմինին վրայ մինչեւ ստորոտը եւ բացաստանը, խմբած է, ցրուած է բազմութիւններ մարդկային մարմիններու, ներկայացնելով ընկերային կեանքի զանազան վիճակներ։ Եւ թերեւս անոնք կը ներկայացնելն իր ժամանակի ընկերութեան մէջ ծանօթ զանազան անձնաւորութիւններ, որոնք երբ կը նայէին այդ նկարին իրենց նկարագիրը եւ իրենց պատկերը կը տեսնէին այնտեղ։

1991 Bnijhu – Ognusnu

Ասոնցմէ շատեր զբաղուած են իրենց յատուկ մտահոգութիւններով, կոնակ դարձուցած են ճառագայթող լոյսին, եւ հետեւաբար կը մնան մութին եւ խաւարին մէջ։ Իրենց fiuuf բան կորսնցուցած եւ շուարած։

Ուրիջներ, իրենց երեսը դարձուցած են դէպի լերան կատարը, եւ quipan injup' ghatda tin he incominant, to manag attatant tin her way այնտեղ էն funuկան վիճակ մը, արտայայտութիւն մը։ երանա_

7.

Այսպիսով, մինչեւ իսկ Ռաֆայել նկարիչին "Այլակերպութիւն" նկարին մեզի կը փոխանցուի ամբողջ պատգամը Աւետարանին։ uhonguu.

գը հետուս, իր շուրջը հաւաքուած ժողովուրդին ըսած էր արդէն. "Մի կարծէք թէ, ծմ օրէնքը լուծելու, քայքայելու, եւ կամ մարգարէներու ուսուցումը եկած եմ օրէնքը լուծելու, tu til. նախանձայուզութիւնը անտեսելու։

Պետրոս Առաքեալ եւս, Յիսուսի կեանքին հետ իր ունեցած բոլոր րէն յետոյ, Հռոմի Քրիստոնեաներուն ուղղուած իր երկրորդ նամակին մէջ, hnpåunniphillbիր պարտականութիւնն է յիշեցնել, կրկնել եւ վկայել, Քրիստոսի հետ h'put pt. կապուած painp յիշատակներուն մասին։

Եւ կ'ըսէ. "ասոնը երեւակայական պատմութիւններ չեն։ Մենք մեր աչքովը տեսանը։ Մենը մեր ականջովը լսեցինը ձայնը որ ըստը. "Դա է Որդի իմ սիրելի, որուն հանեցայ։"

Սորվեցնելը, վկայ դառնալը, նշմարտութիւնները կրկին հաստատելը, ամէն քրիստոնեայի պարտականութիւնն է, սերունդէ սերունդ։

Ь.

Մեր Եկեղեցւոյ հայրապետները այդ պարտականութիւնը կատարած են բազմազան կեր– պերով, եւ օգտագործելով մեր ժողովուրդի կեանքին եւ պատմութեան ընձեռած առիթները։

Այդ առիթներեն են, մինչեւ իսկ հեթանոսական 4polt0 daugud undnpniphiaabpp. վարդավառը, աղաւնի թռցնելը, իրարու վրայ ջուր puhtip. Նաւասարդեան ամանորը. լոյսի եւ կրակի հետ կապուած պաշտամունըը։

Մեր հայրապետներուն նպատակը եղած է ժողովուրդին տալ իր հին հաւատալիքներու փոխարէն՝ նորը, ճշմարիտը, յաւիտենականը, եւ անանցանելին. ճշմարիտ կեանքի լոյսը, կրակը, որ չի հատնիր, չի սպառիր, չի խաւարիր, չի մարիր։ Որ Քրիստոս gnipp. hapa hul t:

Այսօր մենը ո՞ւր կանգնած ենք Յիսուսի Պայծառակերպութեան այդ հիանալի տեսիլ – pha uty:

Որքանո™վ կը յիշենք, կը կրկնենք, կը վկայենք, կը հաստատենք այն ճշմարտութիւն– ները, որոնը Աւետարանի կենդանարար աղբիւրէն մեզի փոխանցած են մեր ժողովուրդին իմաստունները, սուրբերը, հերոսները, հայրապետները։

Մեր կեա'նթը, մեր խօ'սթը, մեր գործե'րը միայն կրնան յայտարարել թէ ո*ր մակարդակին վրայ կը գտնուինը։

Երանելի ենք, եթէ մեր դէմբերը դարձուցած ենք դէպի լերան կատարը, եւ այնտեղէն ճառազայթող լոյսը, եւ աստուածային շնորհին միջոցաւ կը միանանը աշխարհի բոլոր այն հոգիներուն, որոնը գիտեն ապրիլ գոհունակութեամբ, ներդաշնակութեամբ, սիրով, հաւատրով եւ յոյսով։ Ասոնց միջոցաւ կը փառաւորուի անունը Shtqtpph upuph2h6. յաւիտեանս յաւիտենից։

U.U. 9

ԽԱՉԱԿՑՈՒԹԻԻՆ ԸՆԴ ՔՐԻՍՏՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀ ՓԱՌԱԿՑՈՒԹԵԱՆ

«Խաչակցեալը ընդ Քրիստոսի եւ ընդ նմին թագաւորեալը» Ծարական

Նախրան իմ հոգեւոր խօսրին անցնիլը, պարտը կըզգամ փոխանցելու Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի սիրոյ ջերմ ողջոյնները Առաբելական Աթոռոյ Երուսաղէմի Հայոց Պատրիարը Ամենապատիւ Տ. Թորգոմ Արբեպս. Մանուկեանին եւ Միաբանութեան։ Կուզեմ յայտնել նաեւ իմ որդիական խորին երախտա_ գիտութիւնս Նորին Ամենապատուութեան, որ Ձեռագիրներու ուսումնասիրութեանց գծով ամէն դիւրութիւն ընծայեց Ս. Ցակոբայ վանքէն ներս կեցութեանս եւ աշխատանքիս հեզասահ ընթացման. նաեւ եղբայրական ջերմագին շնորհակալութիւններս՝ Միաբանութեան անդամներուն, որոնք իրենց անկեղծ հոգատարութեամբ առաւել եւս քաղցրացուցին եւ իմաստաւորեցին ազատ ժամերս՝ Ս. Տեղեաց ծանօթացումով եւ այսօր առիթը ընծայեցին Ուխտի Պատարագս կատարելու Ս. Յարութեան Տաճարին մէջ։ Յրնթացս Ս. Պատարագի աղօթեցի եւ խնդրեցի որ Աստուած հարցն մերոց իր երկնաւոր իմաստութեամբ շնորհազարդե եւ արեւոտէ Ամենապատիւ Հօր կեանքի օրերը, որպէսզի 20րդ դարու մայրամուտին հաս_ նող այս տասնամեակը ան դարձնէ Սադիմահայ կեանքը պայծառակերպող լուսաշող գահակա_ լութիւն մը՝ զայն կամարելով 21–րդ դարու յուսատու արշալոյսին, ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն Հայց. Առաքելական Սուրբ եկեղեցւոյ։

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Հայց. Եկեղեցին, ըստ հին տոմարի, անցեալ կիրակի տօնախբելէ ետք Քրիստոսի Այլակերպութեան տօնը, մեր Հայրերու իմաստուն կարգադրութեամբ հանդիպակաց առաջին Ծաբաթ օրը` երէկ, ոգեկոչեց մեր եկեղեցւոյ առաջին լուսաւորիչ` Թադէոս Առաբեալի եւ նախավկայուհի Սանդուխտ կոյսի յիշատակը, հրաւիրելով Հայ հաւատացեալը որպէսզի պայծառակերպուած հոգիով իր հաւատքը ամրացնէ առաքելութեան եւ ամբողջական նուի– րումի հրամայականով։

h'pata, Թադէոս Առաքեալի մասին Աւետարանիչները հպանցիկ՝ ակնարկութիւն՝ մը թէպետ այդ վկայութիւնն իսկ բաւ է կառուցանելու համար արժէքը, նախ իբը մարդ եւ ապա որպէս Տասներկուքէն այս միոյն, որ ի տես Քրիստոսի հրաշագործութեանց եւ ի լուր Անոր Վարդապետութեան, մանուկի մը անկեղծութեամբ հարց կու տայ. "Տէր ինչպէս կ'ըլլայ որ դուն ինքզինքդ մեզի պիտի յայտնես եւ ոչ թէ աշխարհին՝՝ (Յովհ. ԺԴ. 22)։ Այս իսկ արտայայտութեամբ ան կը ցոլցանէ իր ներքին անաղարտ պատկերը` իր ունեցած հարստութիւնը եւ ուրախութինը չթաքցնելու եւ չամլացնելու եսակեդրոն ժանգով` այլ զայն վայելելու` բաշխելով եւ ուրիշներու եւս սեփականութիւնը ընելով։ Ահա այսպիսի նկարագրի տէր անձ մըն էր, որ ընտրուելէ ետը Քրիստոսի կողմէ որպէս առաքեալ եւ մկրտուելէ ետք Ս. Հոգւոյն հօթնարփեան շնորհներով, Հայաստան աշխարհ wnwyhl բերաւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի լոյս հաւատքի գանձր, զոր գնահատող իմաստուն վաճառականը (Մատ. ԺԳ. 45) եղաւ պարմանուհի արքայադուստը Սանդուխտ, որ հրաժարելով արբունիրի փառրեն, իր իսկ արեան հեղումով դարձառ փառակից Քրիստոսի եւ դուստը՝ երկնաւոր Արքային։

Ծարականագիր վարդապետը առաքեալներու գործունէութիւնը եւ անոնց վարձատրութիւնը խտացնելով աւետարանաշունչ սա խօսքին մէջ, կ'ըսէ. "Դուք որ խաչակից եղաք Քրիստոսի, Անոր հետ կը թագաւորէը եւ երկրորդ գալուստին պիտի բազմիք որպէս դատաւորներ"։

Խաչի ճամբան առհասարակ այս աշխարհի մտածողութեան խորթ, անհրապոյր եւ անիմաստ ուղի մըն է, սակայն քրիստոնեային համար միակն է ան` յաղթահարելու մահուան եւ ժառանգելու փառաց պսակը։ Հոգեգալուստէն առաջ նոյնիսկ առաքեալները անհաղորդ էին խաչի իսկական խորհուրդին եւ խաչի չարչարանքով տուայտող իրենց վարդապետին սրբազնագոյն Առաքելութեան։ Միայն ու միայն Ս. Հոգիով հրազինուելէ ետք է որ

անոնք կրցան ըմբռնել խորհուրդ խորինը, նանչցան խաչեալ, թաղեալ եւ Ցարուցեալ՝ ժամանակին մէջ պատսպարուած Անժամանակին ինքնութիւնը եւ հասկցան աստուածային գերագոյն սէրը ճանանչող Անոր ընտրած խոնարհագոյն ճամբուն անզուգական մեծութիւ– նը։ Ահա թէ ինչու խաչը դադրեցաւ նկատուելէ մահուան գործիք, իսկ խաչուիլը անարգ պատիժ. այլ՝ խաչը բացատրուեցաւ մեղաց ջրհեղեղէն ազատագրման Քրիստոսեան տապան եւ եղաւ պարծանքի նշան (Գաղ. Ջ. 14), իսկ խաչակից ըլլալը Քրիստոսի դարձու Անոր կատարելութեան նմանելու գերագոյն ըղձանք (Գաղ. Բ. 20)։

Այս հաւատքով է որ Առաքեալներն եւ անոնց հետեւորդները անդրադառնալով բարոյագիտութեան չափ ու կշիռի ամէն սահման, որ յատուկ է Հին Կտակարանի մտածողութեան, ոչ միայն ներեցին եօթը կամ եօթանասուն եօթն ամգամ, այլ քարաձիգ ըլլալով հանդերձ աղօթեցին. "Տէր, ասիկա մեղք մի սեպեր անոնց" (Գործք Է. 59)։

Այս յոյսով է որ դերատի արքայադուստրեր՝ եւ ազնուազարմեր՝ շատերու կողմէ նախանձելի նկատուող արքունական փառքէն հրաժարեցաւ՝ ժառանգելու անոնց թագաւորու– թիւնը։

Այս սիրով է որ սուրբերու երամները մերժելով աշխարհի սէրը բորբոքեցան երկնային սիրոյ հուրով։

Եւ այս առաջադրութեամբ է որ իւրաքանչիւր անհատ որ կը մկրտուի, ւանդ իւրաքանչիւր քրիստոնեայ որ կը պատրաստուի Քրիստոսի լուծը կրելու, կը հրաւիրուի խաչելու եւ թաղելու իր մէջ մեղքի br. մանածառայութեան pungp մարդը եւ Rphuտոսի հետ յարութիւն առնելու որպէս նոր մարդ. կը հրաւիրուի ապրելու, ծառայելու եւ զոհաբերուելու անկարելին եւ անտանելին կարելի ու տանելի դարձուցած Uumnumծային օրինակով, եւ ... փառակից ըլլալու անճառ խոստմանց։

Քրիստոսի հետ խաչակցութեան եւ փառակցութեան այս տեսլականով է որ երբ անդրանիկ պատարագս մատուցի իր իսկ արեամբ սրբագործեալ եւ նորաստեղծեալ հրեշտակաց բնակարան եւ մարդկան քաւարան՝ Ս. Յարութեան այս հրաշագործ տաճարին մէջ, իմ առջեւ խնդրանքս եղաւ առ Աստուած որ իր Աջը. որով կը նախախնամէ տիեզերքը եւ մանաւանդ Հայ ժողովուրդը, անպակաս ընէ Ս. Յակոբեանց զինուորագրեալ Միաբանութեան վրայեն, որ վանական պարտականութեանց կողքին իր ուսերուն առած է համայն մեր ժողովուրդի Ս. Տեղեաց դարաւոր իրաւունքներու հոգատարութիւնը։ Սիրելի հոգեւոր եղբայրներ, որքան ձեր զոհողութիւնը անսահման ըլլայ. Տէրը ի՞նք վարձահատոյց պիտի ըլլայ Ձեր անփոխարինելի ծառայութեան։

Իմ երկրորդ աղաչանըս առ Աստուած եղաւ մեր ժառանգաւորաց սաներուն համար, որպէսզի Տէրը անոնց սրտին ու մտքին վրայ դրոշմէ պատանի Սամուէլի ու Դաւիթի կնիրը, որպէսզի աճին ու զարգանան աստուածահաճոյ շնորհներով։ Սիրելի ժառանգաւոր կրտսեր եղբայրներ, երանելի էր դուք որ այս հոգեմտաւոր նոր ընտանիքի որպէս անդամ ընդունուած էր, որովհետեւ հայ հաւատքի ու մշակոյթի անկողոպտելի գանձերով հարս– տացած ու զինուած, պիտի դառնաք Քրիստոսի վաղուան զինուորները՝ պաշտպանելու համար հայ հաւատացեալը յերեւելի եւ յաներեւոյթ թշնամիէն։

Իմ հրրորդ պաղատանքս առ Աստուած բարձրացուցի Սաղիմահայ համայնքին համար, որպեսզի Երուսաղէմի խաղաղութեան ոգիով իրենց սրտերը կամրջուին։ Սիրելիներ, այնպես ինչպես Հայաստանի մեր Ժողովուրդը իր ներկայութեամբ կը պաշտպանէ մեր Հայրենիքը, նոյնպես, դուք եւս մեր քրիստոնէական երկրաւոր հայրենիքի պաշտպան– ներն էք։ Հետեւաբար, Ձեր համերաշխ գործակցութեամբ բոլորուեցէք շուրջը եւ գօրա– ւիգ կանգնեցէք մեր 15 դարեան աստուածապարգեւ հոգեմտաւոր օնախ՝ Հայոց Պատրիար– քութեան։

Իմ խօսքը կը փակեմ մեր մեծ պատմահօր իրապաշտ արժեւորումով։ Այս սուրբ եր– կիրը որ աւելի քան մէկ միլիառ քրիստոնեաներու համար գերագոյն սրբավայր է, բաղ– դատելով Հայ Ժողովուրդի թիւը եւ ձեռք ձգած իրաւունքները համայն քրիստոնեաներու թուահամարին եւ ունեցած իրաւունքներուն, կարելի չէ չգոչել. "թէպէտ փոքր ածու ենը..." սակայն արդար կերպով կրնանք հպարտանալ մեր հայրերու թողած ժառանգով։

Այս բոլոր բարիքներով շրջապատուած, այս բոլոր օրենութիւններով անձրեւուած, միաբերան ու միասիրտ ըսինը. "Տէր, ինչ լաւ է որ հոս մնանը, հոս ծառայենք քեզի, եւ հոսկէ դիմաւորենք երկրորդ գալուստդ". փառաւորելով Ամենասուրբ երրորդութիւնը յաւիտեանս յաւիտենից ամէն։

Անուշաւան Վրդ. Դանիէլեան

21 Bnilhu 1991

digitised by

« ԳԱՄԱԳՏԱԿԱՆ »

Գիտական աշխարհը այս տարի կը բոլորէ Պահլաւանունիներու տոհմէն սերած փառաւոր իշխան ու գիտուն` Գրիգոր Մագիստրոսի ծննդեան հազարամեակը։

Գրիգոր ծնած է 990 թուին, Անի քաղաքի Պահլաւանունիներու տան մէջ։ Անոր հայրն է Վասակ Պահլաւունի, իսկ որդին՝ Վահրամ, որ յետագային դարձաւ Կաթողիկոս՝ Գրիգոր Բ. վկայասէր վերանուանումով։

Մանուկ տիովը, Գրիգոր սէր ունէր գիտութեանց հանդէպ։ Ան շարունակ զբաղուեր է ուսմամբ։ Ուսման իր ծառաւ հոգին յագեցուցած է անձանձրոյթ ընթերցմամբ։ Այս անխոնջ մշակը ծանրաբեռնուած է գիտութեան բազմաթիւ ճիւղերով։ Ինքնազարգացման հետամուտ Մագիստրոսը իւրացուցած է իր ժամանակի գիտելիքները` դառնալով իր շրջանի ամենակարկառուն դէմբերէն մէկը։

Անոր հետաքրքրութիւնը չէ սահմանափակուած լոկ եկեղեցական, կրօնական գիտելիքներով (Ս. Գիրք, եկեղեցական հայրերու գրուածքներ են)։ Գիտութեամբ իր անձը լուսաւորելու պահանջքն ու մարմաջը զինք առաջնորդած են դէպի արտաքին գիտութիւններ, ինչպէս՝ բժշկութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն, աստղաբաշխութիւն, երաժշտութիւն եւայլն։

Գր. Մագիստրոս մեզի կը ներկայանայ իբրեւ ազգասէր, կրօնասէր hwj եկե_ ti1 ղեցւոյ մեծ պաշտպան։ Հայ Եկեղեցւոյ պատմութենէն թէ ինչպէս մեզի յայտնի Ł Մագիստրոսի շրջանը խառն էր` կրօնական գաղափարախօսութեանց յայտնումով։ Մագիստրոսէն առաջ (ը. դար), հայոց հողի վրայ ծնունդ առած էր Պաւղիկեան շարժումը։ 873 թուին, Պաւղիկեան աղանդաւորներու ահռելի ջարդին անմիջապէս յաջորդեց Թոնդրակեցիներուն աղանդը։ Այս նոր մտաւոր հոսանքը կուգար ժխտելու Հայ Եկեղեցւոյ նուիրապետական կարգը, խորհուրդները, Քրիստոսի աստուածութիւնը, պաշտամունքները եւ եկեղեցական ընդհանուր կարգնուսարգը։ Այս գաղափարախօսութիւնը անկասկած 4p կացնահարէր աւանդական Հայ Եկեղեցւոյ վարդապետութիւնը, նուիրականութիւնը, կը սրբապղծէր հաւատոյ հանգանակը ու կ'ոտնակոխէր Հայ Եկեղեցւոյ իրաւունքը։ Այս աղանդին նպատակն էր Հայ Եկեղեցիէն ներս հիմնական փոփոխութիւններ մտցնելով « բարեկարգել » կամ « վերանորոգել » զԱյն։

Այս շրջանին է որ հանդէս կուզայ Հայ Եկեղեցւոյ կորովի պաշտպան Գր. Մագիստրոս։ Իբրեւ Միջագետքի կուսակալ, Ան զինուորական խիստ ճնշմանց կ'ենթարկէ աղանդաւորներուն. կը քանդէ անոնց Թոնդրակ անուանեալ գիւղը եւ հալածելով դուրս կը շպրտէ զանոնք իրենց « Շնավանք »էն։ Մագիստրոս ոչ միայն զինու զօրութեամբ այլեւ բանիւ կը պայքարի անոնց դէմ։ Իր թուղթերուն մէջ կան յիշատակութիւններ ու ձաղկիչ խօսքեր անոնց պիղծ գործունէութեանց մասին։

Գր. Մագիստրոս Հայ Եկեղեցական մատենագրութեան մէջ ծանօթ է իբրեւ այր պատկառելի ու շնորհալի, լի իմաստութեամբ ու անհատականութեամբ։ Ան ձգած է մեզի բազմաթիւ թուղթեր (շուրջ 88 հատ), որ եւ հրատարակուած են Կ. Կոստանեանցի կողմէ 1910 թուին, Ալեքսանդրապօլ։ Ունի նաեւ չափածոյ երկեր եւ ներբողներ։ Իր չափածոյ գրութեանց մէջ նշանաւոր է « Հազարտողեան »ը, որ գրուած է ոտանաւորի ձեւով եւ բաղկացած է 1016 տողերէ։

Գրիգոր Մագիստրոս յայտնի է մեզի նաեւ իր ուսման ծրագրով, որ կը բաղկանար պեսպես գիտութիւններէ՝ աստուածաբանութիւնն ունենալով իբրեւ բարձրագոյն ու գերազանց գիտութիւն կամ ուսմունը։ Ան զգացած է կարիքը նոր մեթոտներով կիրքեր գրելու (հեղինակած է « մեկնութիւն Քերականին ») եւ թարգմանական աշխատանքով հայութեան ծանօթացնելու օտար (յատկապես՝ յոյն) ժողովուրդներու մշակութային նուաճումները։ Տրամաբանութեան, երկրաչափութեան եւ այլ մարզերուն մէջ կատարած է կարեւոր թարգմանութիւններ։ « Եւ եթէ տակաւին կամեսցի Տէր երակարանալ մեզ ի կենցաղումս » գրած է Մագիստրոս, ուրիշ բաներ եւս կը ծրագրէ թարգմանել՝ « Յունաց եւ Ասորւոց »։

Մագիստրոսի գրական վաստակին մէջ պատկառելի տեղ կը բռնեն անոր թուղթերը։

Մեր իրականութեան մեջ այս գրական սեռը համեմատաբար նոր է։ Անոր թուղթերը մեկական նամակներ են ուղղուած զանազան անձանց, ինչպէս՝ աշակերտներու, եկեղեցականներու, ծանօթներու եւն։ Անոնց մէջ արծարծուած նիւթերը ընդհանրապէս սերտ աղերս ունին գիտութեան, գրականութեան ու քաղաքականութեան հետ։ Իր գրութիւններեն յայտնի է մեր առջեւ կանգնած է մտքի տիտան մը՝ խորասոյզ մտքերով, իմաստալից գաղափարներով, արծեքաւոր խորհրդածութիւններով ու վերլուծութիւններով։ Մագիստրոս իր թուղթերուն մեջ կը սիրե « պուետիկոսել », ոչ բանաստեղծել իմաստով, այլ՝ իմաստասիրել իմաստասիրելու մէջ այս մեծ ու անմրցելի վարպետը ապշեցուցիչ տեղեկութիւններ): յայտնէ բնութեան տարերքի ու կեանքի զանազան երեւոյթներուն մասին։ Գիտութիւնները (բժշկագիտութիւն, տիեզերագիտութիւն, կենսաբանութիւն, երաժշտութիւն եւլն.) միշտ հիմնական առանցքը կը կազմեն իր իմաստալից ու բովանդակալից թուղթերուն։ Անոնց մէջ հեղինակը կը « պուետիկոսէ » եւ մեզի կը յայտնէ իր հայեացքն ու տեսակէտը, զգա– ցումն ու գաղափարը։ Ան բաջ տեղեակ է իր գրած նիւթերուն մասին։ Ան իր խօսքը սիրէ համեմել կենդանի օրինակներով եւ ակնարկներով, որոնք սովորաբար քաղուած կը հին յունական առասպելներեն, դիցաբանութենեն, բժշկագիտութենեն, Ս, Գիրքեն Հայոց պատմութենէն։ Իր թուղթերը ցոյց կուտան նաեւ որ ան զօրաւոր տրամաբանող է, nL րաջ ու հմուտ վիճող։ Իր կեցուածրին մէջ խրուխտ է ու աննկուն։ Պարտուելու անըն– դունակ այս գիտունը իր տեսակէտները եւ կարկածները կը հիմնէ գիտութեան ընձեռած տուեալներուն վրայ։ Տրամաբանութեան հետ զգացում չխառնող այս « պուետիկոսը » գիտէ միտքերը դասաւորելու, համոզելու, եւ իր դիմացինը իմաստուն բանիւ պարտութեան մատնելու գաղտնիքը։ Երբ խնդրոյ առարկան ճշմարտութիւնն է ու անոր բացայայտումը, ան չունի երկիւղ. իր համարձակ ու յախուռն նկարագիրը ի գործ կը դնէ ճակատամարտելու, անխնայօրէն քննադատելու, հեգնելու եւ այպանելու ամէն դասակարգի ու սեռի մարդիկ։ Ամէնքիս յայտնի է Եփրեմ Եպիսկոպոսին վրայ կատարուած զայրալից սպառնա– լիքները՝ գիտութեան մեջ խօսք չունենալու, խուց ու խրճիթ քաշուելու եւ սաղմոս ասելու. ապա թէ ոչ՝ « ճանճին պէս կը ճմլուի »։

Մագիստրոսի թուղթերուն լեզուն մութ է ու անմատչելի։ Խորապես ազդուած է Յունաբան գործիչներուն կազմած նորահնար բառերեն ու դարձուածքեն։ Հին Յունարենի ազդեցութիւնը զգալի է ամենուրեք։ Անոր ոճային առանձնայատկութիւններն են` մտքի յստակութեան պակասը, խրթնութիւնը, « համանիշներու կուտակումը եւ բաղաձայնոյթը ». հին ու անգործածելի դարձած բառերու լիառատ կիռարումը, Բովանդակութեանց նորու– թիւնը եւլն։

Մագիստրոսի դժուարահասու ոճը բացայայտող դասական օրինակ է անոր նշանաւոր «Գամագտական Թուղթը »։ Այս նամակին բուն վերնագիրն է՝ «Բան իմաստասիրական զոր ասացեալ է մեծի փիլիսոփային Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունւոյ յիւր անուն » եւ ուղղուած է մի ոմն յոյն դպիր Կիրակոսին։ Թուղթին սկզբնաւորութիւնն է՝ «Գամագտա– կան Գեղանամ շոհացեալ՝ քեզ յայդմ պատահեալ տառի տարակոյս տատանական, տրոհել զտարբեղունն կասկածանս...»։

Նախքան այս թուղթին բովանդակութեանը անցնիլը, կ'արժէ երկու խօսք ըսել անոր կազմութեան ու անոր շուրջ կատարուած քննութեանց մասին։

« Գամագտական »ը ծայրանուն է եւ ունի ընդամէնը 15 տուն։ Այս թուղթով gpuղուած են Հայկազեան բառարանի յարգելի հեղինակները. բայց քանի որ թուղթին ute « լի են անիմանալի բառը, զորովը զանց արարաք », գրած են անոնը։ Այնուհետեւ, բանասեր Հայր Գաթըրճեան ձեռնարկած է Մագիստրոսի թուղթերուն մեկնաբանման։ Ան կը խոստովանի որ այս թուղթերը, եւ յատկապէս « Գամագտական »ը « հանճարեղք անգամ եւ հմտագոյնը չէին կրնար ըստ արժանւոյն հասկնալ »։ Երրորդ խօսող բանասէրը Հայր Յակովբոս Տաշեանն է. ինք եւս կ ընդունի այս թղթոյն մտքին անյայտ ու անիմանայի ըլլալը։ Վերջապես եւ « Գամագտական »ով զբաղուած է յայտնի բնագրագետ ու հմուտ բանասէր Նորայր Բիւզանդացին։ Ահա թէ ի՛նչ կը գրէ ան. « Զ'անիմանալի համարեալ « Գամագտական »իս մեկնութիւնն` զոր թերեւս ոչ ոք պիտի կարենայ գտնել, տուած է նոյն ինքն Գր. Մագիստրոս ի շարի իւր նամականւոյն »։ « Գամագտական »ի թարգմանու– թիւնը, Մագիստրոսի իսկ կողմէ կատարուած, գտնուած է ուրեմն Նորայր Բիւզանդացիի կողմէ։ Նորայր այս թուղթին հարեւանցիօրէն ծանօթ եղած է թերեւս իր աշակերտական տարիներեն ի վանս Ս. Ղազարու։ 1896 թուին, Բիւզանդացին պատահմամբ կը հանդիպի միայն վեց տուներուն թարգմանութեանը. « մեկնութիւն հետագայ ինն տանցն որ 4p կապեն Մագիստռոս՝ անյայտ է դեռ եւս. հնար է թէ գտնուի եւ այն ի լաւագոյն ձեռագ_ րի, կը գրէ Նորայր։

«Գամագտական »ին գրութեան բուն շարժառիթը յոյն դպիր (որ է՝ բանիմաց, գիտուն, քերականագէտ) Կիւրակոսին մէկ դասախօսութիւնն է ի ներկայութեան Մագիստ– րոսի եւ «իմաստնոց եւ անմտից բազմութեան »։ Կիւրակոս դպիրը յանդգնած էր նառելու «մարդկային բնութեան ախոնդեացն [ստամոբսներու] ներգործութեան » մասին եւ յայտնած էր այն թիւր կարծիքը որ ստամոբսը ի բնէ տկար անօթ մը ըլլալով « գյոգնա– բեղուն նաշակս իւր զաւրէ արիւնացուցանել եւ բաշխել »։

«Այս Կիւրակոս Յոյն Դպիր » նամակին մէջ Մագիստրոս կը յանդիմանէ յոյն դպիրը, որ հակառակ իր զառամեալ վինակին, թերեւս կը զբաղի « տղայական ու խակազոյն խնդիրներով »։ Ի հակաճառութիւն Կիւրակոսին արտայայտած մտրերուն, Մագիստրոս կր պնդէ ու կ'ապացուցանէ որ ստամորսը տկար չէ, այլ` զօրաւոր։ «Եթէ փանաք (տկար, խեղճ) եւ վտիտ անդամոյն ախոնդիքն (ստամոքս), զիարդ զայսպիսի ներգործութիւն տեւէ եւ տոկայ արբանեկել, յայսմ յոյժ մանկական եհաս քեզ տարախոհումն (անպիտան մտածում) ոչ գիտես եթէ ստեղծիչն ոչ զնա վտիտ եւ փանաք եւ յոռին քան զայլսն ստեղծ... այլ սա յոյժ զօրաւոր եւ քաջուղեղապէս ունի զիւրն բաղկացութեան qonniթիւն...»։ Ապա կը շարունակէ խրատելով. « Եթէ կամիցիս ի ծերութեանդ զմանկանն այժմ ուսանել, ընթերցցիս զմատեանս Գաղիանոսի, զՍիսալիոսին, զԳրիգորին Նիւսեան...»։ Հայ իշխանը զարմացած կը հարցնէ յոյնին թէ ինչո՞ւ անպայման զգանչացած է մարդկային ստամոքսով եւ ոչ թռչուններով, որ ամէն տարի իրենց փետուրը կը փոխեն։ Նաեւ « qha ոչ սբանչանս կալաւ զբեզ սակս ճնճղկոյ եւ կամ այլոց տկարագունիցն հաւուցն, pulg միայն մարդոյս եւ այն ախոնդեացն որ յինքեան ըստանցնեալ բերէ զերկնի եւ զերկրի զօրութիւն, մանաւանդ վասն որոյ ստեղծաւ իսկ »։ Յետոյ յուսկ, իբրեւ եզրափակում այս առաջին նամակին, Մագիստրոս կ'ըսէ. « Որք ոչ զախոնդեացն զաւրութիւնս իմանան, զիա^արդ աստուածաբանութեան զինքեանս կարող կարծեն Գոլ։ Որը յաղջամղջին տեղէ bind եւ ի խաւարչտին այն ինչ յարեգակն հայել ձեռնարկեն որք ի նոյն ժամուն կուրանան »։

8njû դպիրը անշուշտ դժուարացած է հասկնալ միտքին այս նամակին եւ խնդրած է Մագիստրոսէն որ պարզ ու հասկնալի լեզուով գրէ իրեն համար։ Այս նկատողութեան վրայ մեր Մագիստրոս իշխանը զայրացած է որ յոյն մը յանդգնած է զինք խրթնաբան համարել։ Ի հենուկս յոյնին, Մագիստրոս հանդէս եկած է իր բ. թուղթով` « Գամագտական »ով` առ ի ցուցադրութիւն իր կարողութեանը եւ հմտութեանը` խրթնաբանութեան արուեստին մէջ։ Այս թուղթին վրայ, խեղճ յոյն դպիրը, անգօր եւ անօգնական, ընդունած է իր անգիտութիւնը ու հայցած Մագիստրոսեն մատչելի լեզուով մը իր միտքը յայտնել։ Բիւզանդացին կը վերջացնէ այս զաւեշտական խաղը ըսելով. « Մագիստրոս ալ` արգահատելով կիւրակոսի – եւ մեր յետնոցս– տգիտութեան` յաջորդ թղթատարաւ կը յղէ նմին զցանկալի մեկնութիւնն »։ Այսպիսով, « Գամագտական Գեղանամ շոհացեալ »ը կը դառնայ « Յաղթող վայելչական ճեմեալ »։

«Գամագտական »ի առաջին վեց տուներուն բովանդակութիւնը հիմնականին յոյն դպրին տգիտութիւնն է ու անկարողութիւնը` երեւոյթներուն ներթափանցելու, ճշմարտութիւնը որոնելու եւ իմանալու։ Վեցերորդ տունը կը թուի բաւական վիրաւորական ըլլալ հեք դպրին, որովհետեւ այնտեղ յստակօրեն կ'ըսուի « Թերեք զթորակողութիւն տրոհիցես ». որ է` եթէ երբեւէ ձգես թշուառութիւնը (իմա՛ մտքի) եւ ընդունիս որ խեղճ, փուճ ու անգէտ ես, այդ ժամանակ քեզի « աւետաւոր », կ'ըլլամ եւ « ի հուսկիցս կարծիցդ », որ է` « ի վերջին տգիտութենէ » քեզ դուրս կը հանեմ։

Մեզի ծանօթ չէ դժբախտաբար թէ յոյն դպիրը այնուհետեւ քաջութիւնը ունեցա[«]ւ հրապարակաւ եւ ի մասնաւորի ի ներկայութեան Մազիստրոսի բանախօսելու։ Պատասխանը պարզ է։

«Գամագտական »ը միակ թուղթը չէ որտեղ գործածուած լեզուն մթին է ու խրթին։ Մագիստրոսի մնացեալ միւս թուղթերն ալ դժուարիմանալի են։ Ոմանը ուղղուած են « առ հեղգս » (ծոյլերուն), որպէսզի զիրենը աշխատանքի լծէ. ուրիշներ ղրկուած են իր որդւոյն՝ Վահրամ Վեստին։

Մագիստրոսի արժանիքը անտարակոյս համակողմանիօրէն զարգացած ըլլալու մէջ կը կայանայ։ Ժ.ԺԱ. դարերու գրական հորիզոնին վրայ Ան փայլեցաւ իբրեւ աննմանօրէն հաւատարիմ հայ իշխան, գիտութեան պաշտպան եւ Հայ եկեղեցւոյ ջատագով։

Մանուկ Աբեղեանի գնահատականով, Գրիգոր Մագիստրոս հանդիսացաւ մեր « վաղ վերածնութեան շրջանի լաւագոյն ներկայացուցիչը » եւ եղաւ « իսկական Լուսաւորական գործիչ » մը։

Հայ իշխանը վախճանած է 1058 թուին։ Բիւր յարգանք Անոր անթառամ յիշատակին։

Չենոբ Քնյ. Նալպանտեան

124

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԱՃԱՐԻ

Վերանորոգումն Ս. Լուսաւորիչ Տանարին

Ս. Լուսաւորիչ Տաճարը անգամ մը վերանորոգուած էր արդէն, սկսելով 1937 թուա– կանէն, Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Գուշակեան Ս. Պատրիարքի գահակալութեան օրերուն։ Այդ վերանորոգութիւնը շարունակուեցաւ Մեսրոպ եւ Կիւրեղ Պատրիարքներու օրերուն եւ աւարտեցաւ 1951ին, Ամենապատիւ Տ. Եղիշէ Ս. Պատրիարքի Տեղապահութեան օրերուն, սրբապատկերներու գետեղումով։

Այս վերանորոգութեան առթիւ, վար առնուեցան պատերուն հնացած ծեփերը, եւ Եկեղեցին յայտնաբերուեցաւ իր հնօրեայ քարերու գեղեցկութեամբը։ Նոր ի նորոյ սալայատակուեցաւ, նորոգուեցան առաստաղի ծայրամասերը եւ գմբէթը ներսէն, իսկ պատարագի զոյգ սեղաններու փայտեայ խաչկալները փոխանակուեցան Հայոճ Մարմարեայ կաթողիկէ խաչկալներով։ Տաճարի բոլոր սրբապատկերները փոխանակուեցան նորերով, գործ` ճարտարապետ-նկարիչ Մարտիրոս Ալթունեանի։ Իսկ գմբէթը դուրսէն վերանորոգուեցաւ Անգլիական հարուստ կառավարութեան կողմէն, որովհետեւ արտաքին տանեաց մասին վերանորոգուբապեշաց Տէյր-ըլ-Սուլթան վանքը, եւ մենք այդ արտաքին տանեաց մասին վերանորոգութեան համար ունինք իրաւական դժուարութիւններ։

Ս. Լուսաւորիչ Տաճարին երկրորդ վերանորոգութինը սկսաւ 1 Յունուար 1977ին եւ վերջացաւ 1978ի գրեթէ վերջերը։

Այս առթիւ կատարուեցան հետեւեալ վերանորոգութիւնները։

ա .- Վերանորոգուեցան Տաճարի ամբողջ առաստաղին եւ գմբէթի ներքնամասին ծեփերը, սկսելով դռնէն մինչեւ Ս. Սեղանները։

բ .- Վերանորոգուեցան քարեղեն պատերու արանքներուն՝ վնասուած ծեփերը (քոհլէները)։

գ .- Վերանորոգուեցան Տաճարի մուտքին քարեղէն աստիճանին վնասուած քարերը։

դ .- Նորերով փոխանակուեցան Տաճարի սալայատակին վնասուած քարերը։

ե .– Մուտքի սանդուխին երկու կողմերու աւանդատուները շրջապատող կտաւէ հնացած վարագոյրները փոխանակուեցան Հայկական խաչքարերով դրուագուած տախտակէ կիսապատկե– րով։

զ .- Յունաց եւ Լատինաց հետ մասնաւոր համաձայնութեամբ Ս. Լուսաւորիչ Տաճարէն ներս ունեցանք մեր սեփական ելեկտրական հոսանքը, կապուած ուղղակի մեր Տեսչարանի ելեկտրական կեդրոնին հետ։

Ի Ս. Լուսաւորիչ մեր անձնական ելեկտրական հոսանքը ունենալու համար մասնաւոր համաձայնութիւն ունեցանը Յունաց եւ Լատինաց հետ 1 Յունիս 1976ին։ Ըստ այդ համա– ձայնութեան, մեր տեսչարանի ելեկտրական կեդրոնէն ընդյատակեայ մեզի սեփական ելեկտրական գիծ մը տարին դէպի Ս. Լուսաւորիչ, անցընելով գայն Պատանատեղւոյն շրջափակեն – որ երեք համայնքներու սեփականութիւնն է – եւ Փուշ-պսակի նրբանցքեն – որ Յունաց սեփականութիւնն է – դէպի Ս. Լուսաւորիչ։ Ելեկտրական թելերու եւ ընդյատակեայ խողովակներու զետեղման ծախրերը, հասարակաց մասերուն մէջ վճարուեցան Հայ, Յոյն եւ Լատին երեք համայնքներէն, հաւասար մասնակցութեամբ, Հայկական մասերունը՝ մեր կողմէ, իսկ Յունական մասերուն մէջ՝ Յոյներէն։ Փոխադարձաբար մենք ալ համ գտնուեցանը որպէսզի Յոյներ եւ Լատիններ իրենց ելեկտրական հոսանքները անցնեն hmumduil մեր Ուշաթափման մատուռի ներքնայատակեն եւ երեք համայնքներու հասարակաց մասերեն Gnjū պայմաններով։ Այսպէս Ս. Լուսաւորչի մէջ մենք ունեցանք ելեկտրական ուժեղ hnuwlip եւ ելեկտրականացուցինը մեր բոլոր ջահերն ու կանթեղները։

Իսկ մենք ալ մեր կարգին նոյն սկզբունքներով եւ համաձայնութեամբ Ս. Լուսա– ւորիչէն ելեկտրական լոյսի անցք տուինք Լատինաց Գիւտ Խաչի մատուռին։

Նոյն սկզբունքային պայմաններով համաձայնութիւն մը ունեցանք Յունաց եւ Լատի– նաց հետ Ս. Լուստւորիչ տարուելիք մաքուր ջուրի հոսանքին համար ու մենք ունեցանք նաեւ մեր մաքուր ջուրի սեփական հոսանքը։

Նոյն համաձայնութիւնը յետագային, նոյն սկզբունքային պայմաններով իրագործելի եղան նաեւ Ս. Յարութեան մնացեալ բոլոր մասերուն համար։

է.- Եւ որովհետեւ Ս. Լուսաւորիչ Տաճարին վերեւ, տանիքին շուրջ կը գտնուհ Եթովպացիներուն Տէր ըլ Սուլթան վանքը եւ մենք կարելիութիւնը չունինք վերանորոգելու Ս. Լուսաւորչի արտաքին տանիքն ու գմբէթին արտաքին երեսը, հետեւաբար Ձ9 Ապրիլ 1977ին դիմեցինը Իսրայէլեան կառավարութեան Կրօնից Նախարարութեան, որպէսզի իրենը կատարեն տանիքին ու գմբէթին արտաքին երեսին վերանորոգութիւնը։ 1977 Մայիսին սկսաւ տանիքի եւ գմբէթի նորոգութեան գործը եւ աւարտեցաւ Ձ4 Նոյեմբեր 1977ին։ Կա_ տարուածը միմիայն գմբէթի արտաքին մակերեսի ծեփին եւ տանեաց սալայատակի քարերու արանքներու սիմէնթին նորոգութիւնն էր, որովհետեւ մենք պայման դրած էինք կառավա_ րութեան որ տանիքի սալայատակի քարերէն վար որեւէ նորոգութիւն պէտք է կատարուի միայն ու միայն մեր կողմէն։

ը.- Ս. Լուսաւորիչ Տանարի վերանորոգութեան առթիւ, երկու կտոր 200 գեղեցիկ մոզայիք յատակներ պատրաստուեցան եւ զետեղուեցան տաճարի գետնին վրայ. wünügdt առաջինը կը ներկայացնէ Խոր-Վիրապի վանքը ի Հայաստան, Արտաշատի բարձունքին Jnwj. ետեւը զոյգ Մասիսները։ Տակը զոյգ կաքաւներ, որթատունկի ամանի մը երկու կողմերուն եւ այս երկու տեսարաններուն միջեւ Ս. Լուսաւորչի նուիրուած շարականէն մէջբերում մը .- « որ ի վիրապն անդնդային ջաղխեր նովաւ – զգլուխ վիշապին, ի գբի ներքնումն իջմամբ սորին, բարձրացուցեր մեզ ի յերկինս, բարեխօսութեամբ Սրբոյն Գրիգորի ողորմեա մեզ Որդի Աստուծոյ»։ Սոյն մոզայիքը զետեղուեցաւ Ս. Լուսաւորչի Աւագ սեղանին առջեւ, դասին կեդրոնը։

Իսկ երկրորդ մոզայիքը զետեղուեցաւ գմբեթին տակ, կեդրոնի գմբեթին տակ, կեդրոնի Ատեանին մեջ, սիւնէ սիւն տարածութեամբ։

Երկրորդ այս մոզայիքին պարունակութիւնը եւս խորապես հայկական է եւ կը Gtpկայացնէ մեր ժողովուրդին եւ մեր Եկեղեցւոյ կեանքէ վերբերուած տուեալներ։

Այսպէս.- Մոզայիքի կեդրոնը կան 9 քառակուսիներու մէջ հետեւեալ տեսարանները.-1) Ս. Լուսաւորչի կառուցած վանքերը.- Էջմիածին - Մայր Աթոռը -Հռիփսիմէն, Գայիանէն, Ծողակաթը, Մշոյ Ս. Կարապետը, որոնք բոլորն ալ աշխարհի առաջին պետական – կառոյց եկեղեցիներ ենք։ Ասոնք՝ իբրեւ նշանակ Քրիստոնեութիւնը պետականօրէն

ընդունած, մեր առաջին Քրիստոնեայ ժողովուրդը եւ պետութիւնը ըլլալու իրողութեան։

2) Սրբոց առաքելոցն Թադէոսի եւ Բարդողիմէոսի գերեզմաններուն վրայ կառուցուած վանքերը յԱղբակ եւ յԱրտազ, իբրեւ նշանակ մեր եկեղեցւոյ Առաքելական ծագման։ Քրիստոնէական մշակոյթին յայտարարը մեր Հայեցի -3) Չուարթնոցը, իբրեւ

մեծութեան, գեղեցկութեան եւ գերազանց արժէքին։ 4) Զոյգ Մասիսները եւ Արաքսը, Աստուածաշնչական լեռն ու հանգստարանը Նոյեան տապանին, այլ խօսքով՝ մեր կապը Աստուածաշունչին հետ։

Uwa Twpti 5) Զուարթնոցաձեւ Նոյեան տապանը, որ վերարտադրութիւնն է Փարիզի պէտք է եկեղեցւոյ գաւթին մէջ գտնուող երկու քանդակներու, որոնց քանդակագործը ըլլայ անծանօթ Հայ արուեստագէտ մը ԺԳ. դարուն։ Նաւին պատկերացումը hupuquu արժէքաւոր վերարտադրութիւնն է մեր Զուարթնոց Տաճարին։ Ազգագրական տեսակէտէն պատմական տուեալ մըն է այս քանդակը, որով կրնանք հաստատել թէ Զուարթնոց Տաճարին այն վերարտադրութիւնը զոր կատարած է մեծանուն ճարատարապետ Թորոս Թորամանեանը. հարազատ վերարտադրութիւն մըն է։ Առ ի ծանօթութիւն աւելցնենք որ Բարիզի Սան Ծաբէլ եկեղեցին կառուցուած է ԺԳ դարուն, Սան Լուի խաչակիր թագաւորին կողմէ, ուր ի պահ թագաւորը դրուեցաւ Քրիստոսի փուշէ պսակը եւ այլ սրբութիւններ, որոնք Uwū Լուի υտացած էր Կոստանդնուպոլսոյ Boudouin կայսրէն։ Pierr de Montreuil Ֆրանսացի Zwj Ֆրանսացի ճարտարապետը ծրագրեց այդ եկեղեցին եւ անոր շինութեան համար վարձեց ամենէն տաղանդաւոր շինարարները։ Անոնց մէջ կային ամենայն հաւանականութեամբ օտար վարպետներ եւս, մանաւանդ Հայեր, որովհետեւ գաւիթի քանդակներուն մէջ գտնուող զոյգ huy Տաճարին ձեւով։ «Նոյի տապան»ները ներկայացուած են, Հայկական **Surm**pbung քանդակման ոճն ալ շատ նման է Մերձաւոր Արեւելքի մէջ գործածուած քանդակման ոճին։

2nupp, Ծնանկարին վերոյիշեալ պարունակութեամբ միջուկին քառակուսի մանրանկարչական ընդհանուր շրջանակ մը, ուր ներկայացուած են ձեռագրական մեր վերաբեարուեստեն եւ Դամասկոսի Դրան Ս. Պողիկտոսի Զ. դարու Հայկական մոզայիքեն կաքաւը, րուած կենդանական տիպարներ, Հայկական արծիւն կռունկը, եղնիկն ու nL որթատունկի մը շարունակական ընթացքին ընդմէջէն։

(Ծարունակելի)

Կիւրեղ Եպս. Գաբիկեան

կայ

digitised by

ՕՐԱԳՐՈՒԹԻՆ Տ. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՆՇԱՆԵԱՆԻ

Յիշատակարան 1917 Յունուար 1էն։

Դեկտ. 4, Երեքշաբթի։ Թնդանօթի ձայներ չկան ամբողջ օրը։ Եօթը Անգլիական օդանաւեր վար առնուեցան քաղաքին վրայ։ Թնդանօթներ ու միթրայէօզի կրակ ըրին Ռուսաց՝ վանքեն, ինչպես ուրիշ անգամներ, սակայն սաւառնակները ռումբերու հասողու– թենեն բարձր էին։

Երէկի ուզուած կտորները այսօր տարի յանձնեցի քաղաքապետարան, 45 վանքին եւ 25 գաղթականներու կողմէ։ 40 կտորներ չհաւնեցան ու ետ տուին։ Վաղը ուրիշներ պիտի տանիմ։

Պատերազմի մասին տարաձայնութիւններ շատ կան, բայց ստուգութեան կարօտ ըլլալուն համար չեմ արձանագրեր։

Դեկտ. 5, Չորեքշաբթի: Երուսաղէմի անձնատուութեան համար Անգլիացւոց կողմէ տրուած պայմանաժամը այս երեկոյ կ'աւարտի, կ'ըսեն։ Իմացանք թէ Երուսաղէմը պաշտպանող Ալի Ֆուատ Փաշա, Միւթէսարըֆ, ոստիկանութեան տեսուչ, Մերքէզ գոմանտանի ու մի քանի սպաներ ժողովք գումարեր են այս մասին խորհրդակցելու։ Միւթէսարէֆը կարծիք յայտներ է տեղի տալ պաշտպանութեան անհնարութեան առջեւ։ Հրամանատարը յայտարարեր է` թէ պիտի դիմադրէ նոյն իսկ մէկ զինուոր ալ մնայ, եւ եթէ պատրաստուի հեռանալ, քաղաքը քարուքանդ պիտի ընէ, ու այսպէս պիտի յանձնէ թշնամիին։ Վիճակը հեռանալ, քաղաքը քարուքանդ պիտի ընէ, ու այսպէս պիտի յանձնէ թշնամիին։ Վիճակը հեռագրուեր է Պոլիս։ Եկած պատասխանը գովելով հրամանատարին հայրենասիրութիւնն ու արիութիւնը, կը յանձնարարէ դիմադրել ցվերջին կէտ, բայց հոգ տանիլ, որ քաղաքն ու ժողովուրդը չվտանգուին։ Հրամանատարը անբաւական մնացեր է այս պատասխանէն։

կը լսենք՝ թէ Անգլիացիք երկաթուղիի գիծեր ձգեր են Ուատի Սարրարէն մինչեւ Պապիւլուատ եւ կառախումբը կ'երթեւեկէ մինչեւ Պէթտիրի կայարանը։ Ծանր հրետանին զետեղեր են Նէպի Սամուէլի վրայ, Աւազաններու մօտ՝ Ս. Գէորգի ետեւ գտնուած բարձունքը բռներ են, յառաջապահ ձիաւորներ տեսնուեր են Մեռեալ Ծովի արեւմտեան եզերքը։ Քալոնիա, Յովհաննու Ծնունդ, ու այդ կողմերը գտնուող գիւղեր պարպուեցան բնակիչներէ։

Երուսաղէմի ու Յոպպէի հրեայ խախամապետներ այսօր վերադարձան։ Ասոնք տարագիր– ներու հետ միասին ղրկուած էին Դամասկոս ու կը պատմեն թէ Ճէմալ Փաշա այնտեղ կանոնաւորուած ընդարձակ տուն մը յատկացուցեր է բոլոր հոգեւոր պետերու բնակութեան ու ամէն հանգստութիւն ընծայեր։ Վերջին այցելութեան ժամանակ հրամայեր է իրենց դառնալ Երուսաղէմ։

Դեկտ. 6 Հինգշաբթի։ Նշանակելի բան մը չպատահեցաւ։ Մանր մունը աննշան լու– րեր կան միայն։ Ուսուցիչ Գրիգոր Էօլմէզեան թիֆիւս հիւանդութեան ենթարկուած ըլլալով հրէից հիւանդանոցը ղրկել տուի։

Դեկտ. 7 Ուրբաթ։ Ամբողջ օրը հանդարտ անցաւ։ Քանի մը անգամ թնդանօթի որոտ– ներ լսուեցան։

Դեկտ. 8 Ծաբաթ։ Գիշերուան ժամը մէկէն սկսեալ թնդանօթի, մեթրայիօզի եւ հրացանի հարուածները կը տեղան անընդհատ։ Ինչպէս կերեւի, բուռն կռիւներ տեղի կ'ունենան արեւմտեան կողմը։ Այժմ ժամը 7ն է, պատերազմը կը շարունակուի աւելի սաստկութեամբ։ Նոյն սաստկութեամբ տեւեց մինչեւ գիշերուայ ժամը եօթը, այսինքն 18 ժամ շարունակաբար, անկէ վերջն ալ ընդհանուր թնդանօթի ոլորտներ մօտեն կը լսենք մինչեւ հիմա, որ է գիշերուան ժամը ինը։

Այսօր պատմական ու նշանակելի օր մը եղաւ Երուսաղէմի համար, որ կը յիշեցնէ Տիտոսի, Օմարի, Խաչակիրներու, Սալահէտտինի պատերազմները Ս. Քաղաքը գրաւելուն առթիւ, սա տարբերութեամբ միայն, թէ արդի պատերազմական կատարելագործեալ զէնքերն ու արհեստը կը փոխանակէին հին նահապետական աղեղին, նիզակին ու բաբանին։

> ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲԱԺԻՆ

կես գիշերեն սկսեալ թանձր մշուշ պատած էր ամեն կողմ, np տեւեց մինչեւ առտուան ժամը եօթն։ Անգլիացիք օգտուելով ปรานวุนต์ գիշերուայ ժամը մէկին կը արեւմտակողմի Խաչավանքի բարձունքը դիրք բռնող յառաջանան յուշիկ դէպի Oud. ուժերը, արագ շարժումով կը պաշարեն ու գերի կ'առնեն երեր վաշտ ghüninn hptlig թնդանօթներով։ Անգլիացիր կը յառաջանան երեր թեւերով։ Հար. Արեւմտեան կողմէն, այսինքն երկաթուղիի գծին ուղղութեամբ, Այն Քէրէմի կամ Յովհ. Ծննդեան գիւղէն հիւսիս արեւմտեան կամ Ռամալլայի կողմէ, ամբողջ հորիզոնի բարձունքներուն til 4 pm շուրջանակի զետեղուած թնդանօթներու պաշտպանութեամբ։ Դիւրութեամբ կը գրաւեն Ull Քէրէմը, ու կը մտնեն Օսմանեան պաշտպանող բանակի երկու թեւերու միջեւ։ Օսմանեան աջ թեւն ալ Ռամալլայի կողմէն թշնամիի սուինաւոր յարձակումով ետ կը մղուի մինչեւ Լիֆթէ, որով պաշտպանող բանակի ճակատը կը խախտի եւ կը սկսի փախուստն ու խուճապը։ Օսմանցիք բանակի նահանջը դիւրացնելու համար, քանի մը կետեր պահեցին մինչեւ երեկոյ, ու կը շարունակեն պահել ցարդ (գիշեր ժամը 9)։

Երկու անգամ դպրոցի տանիքէն երկաթուղիի կայարանի դաշտը դիտեցի, ռումբերու տարափ մըն էր, որ կը տեղար երկուստէք խլացուցիչ պայթումներով եւ ծուխն ու փոշին մթնոլորտը կը լեցնէր։ Թնդանօթի ու միթրալէօզի դժոխային կրակ կը տեղար Անգլիաց– ւոց կողմէ, մանաւանդ, կ'ըսեն, Նէպի Սամուէլի գագաթէն։ Նապլուսի ճամբան անանցա– նելի եղած է, փախուստի միակ ուղին կը մնայ Երիքովի ճամբան։ Առաւօտուն արդէն կային բազմաթիւ մեռեալներ եւ վիրաւորներ, որոնցմով լեցուեցան հիւանդանոցները։ Ոստիկաններն ու փոլիսները հանդիպող Քրիստոնեան եւ հրեան ճակատ կը ղրկէին մեռեալ ու վիրաւոր փոխադրելու համար։

Կը կարծուի թէ Երուսաղէմի անկումը շատ մօտալուտ է։ Իրիկուան դէմ հրամանա– տար Ալի Ֆուատ նորընծայ Փաշան մեկներ է սպայակոյտին ու Գերման սպաներու հետ։ Միւթէսարէֆն ու Բօլիս միւտիրին մեկնել կը պատրաստուին եղեր։ Յառաջապահ ձիա– ւորներ քանի մը կողմերէ մօտեցեր են քաղաքին, ինչպէս մինչեւ Վալախի հրէական հիւանդանոցն, ու ետ են դարձեր։

Դեկտ. 9, Կիրակի։ Երուսաղէմ ազատուա~ծ։ Փառը եւ գոհութիւն Աստուծոյ։ Չորս հարիւր տարուան թուրքի անարգ ու բռնապետական լուծը այսօր թօթափեցաւ Unipp Քաղաքի վրայէն։ Կեղեքիչ, հարստահարող, անբարոյական ու հպատակներու սարսափ ազդող Օսմանեան զինուորականներու եւ պաշտօնեաներու տեղ, ամէն ուրեք կ'երեւին Uligihuկան ազնիւ ազգին սպաներն ու զինուորները, որոնք իբրեւ նոր խաչակիրներ uquuntթիւն շնորհեցին Սուրբ Երկրին, արդարութիւն եւ հաւասարութիւն բերին ժողովուրդին։ Համօրէն բնակչութիւնը, քրիստոնեայ, հրեայ թէ մահմեդական, առանց խտրութեան ազգի ու կրօնքի մոռցան վերջին երեք տարիներէ ի վեր կրած սարսափները, տառապանքներն ու հարստահարութիւնները։ Քաղաքը համօրէն տօնական երեւոյթ առած է։ Խինդն ու երջանկութիւնը կը ճառագայթեն դէմբերու վրայէն։ Ամէնբը փողոցները թափած՝ duliop pt անծանօթ զիրար կը համբուրեն ու կը համբուրուին։ Մասնաւորապես վանքը բնակող bwj գաղթականներու ուրախութեան չափ ու սահման չկայ։ Սրտի անհուն գոհունակութեամբ ականատես եղան Օսմանեան բանակի փախուստին, պաշտօնատուներու եւ qopwüngütpni կողոպուտին։ Ա~ծային վրէժխնդիր աջը տեսան ծանրացած իրենց դանիճներուն վրայ, որոնց ձեռքեն կրած էին սարսափներու դառնագոյնը եւ որոնք դժոխային դիւական ու ամէն հնարքներով թրքահայութիւնը մատնած էին՝ մահուան, զուլումի, աներեւակայելի տուայտանքներու, զարհուրելի աղէտներու ու յետին անարգանքի։ Այսօրուընէ սկսեալ կը քակուին կաշկանդուած լեզուները՝ գերութեան դարաւոր միասին եւ շղթաներու հետ կարող կ'ըլլանք մեր միտքն ու զգացումները գրի առնել ազատ ու անվերապահ։

Անցնինք համառօտիւ արձանագրելու այսօրուան դէպքերը։

Առաւօտեան ժամը 3ին Միւթասարէֆ Իղղթէ պէյ կը մեկնի միւտիրին htm Բոլիս միասին։ Մեկնելէ առաջ Պոլիսէն ստացած հրահանգին համաձայն գրաւոր հրաման կու տայ Քաղաքապետի փոխանորդ Հուսէյին Ալի Էֆ.ի քաղաքը Վերջինս յանձնել թշնամիին։ գոմիսէրի մը ու մի քանի երեւելիներու հետ առտուան ցրաթ 9ին կ'երթայ քաղաքին ծայրը Յոպպէի ճամբուն վրայ, հրէից հիւանդանոցէն քիչ մը անդին ու կը սկսի սպիտակ դրօշակ շարժել։ Անգլիացի ձիաւոր սպայ մը կը մօտենայ։ Փոխ քաղաքապետը կը հրաւիրէ Անգլ. բանակը գրաւել Երուսաղէմը։

(շարունակելի)

digitised by

Մայիս 25, Շաբաթ հրիկոյհան Հայաստանի Դերագոյն Խորհուրդի նախագահին հանդիպումը Փարիզի հայ գաղութին նհրկայացուցիչներուն հետ, աւարտեցաւ «Հայր Մեր»ով։ Ճիշդ է որ այս հրեւոյթը սովորութիւն դարձած է Հայաստանի մէջ ուր հոգեւոր կհանքը, կրօնքը կարիլի ամենէն եռանդոտ բափով Խօբը տասնամեակի լոելու պարտաւորութեան վրեժը կը լուծեն․ շատ յանախ Հշփոթելով աշխարհականին ու հոգեւորին սահմանները։

Սակայն Փարիզի «էնթէրքոնթինանթայ» պանդոկին սրահը այդ իրիկուն ոչ մէկ տուհայ ունէր սահմաննհը շփոթելու նման արարք մը արդարացնելու համար։ Արեւմուտքի հայութիւնը այսօր չէ որ պիտի տատանի երկնքին ու երկրին միջեւ, երբ սկիզբէն ի վեր տէր եղած է ժամանակակից աշխարհի *լաի*, դիրքորոշումին։

digitised by

Այդ երիկոյբը կազմակերպուած էր Չշերու համար հայութեան դարաւոր կարօտին՝ պետականութեան իրականացումը. եօթը հարիւր հոգի փուբացած էր հոն, աչքովը տեսնելու եւ ականջովը լսելու համար մեր պետականութեան բարձրագոյն՝ մակարդակի մէկ Ոերկայացուցիչը. ան խօսեցաւ այդ ըմբոնումին պարտադրանքներուն, պահանջքներուն ու անով վերջապէս ազգերու իրաստեսւաստը անդամ ըլլալու իրականութեան մասին։

A.R.A.R.@

Նոյն օրը Փարիզի հկհղեցին ոգեկոչած էր Սարդարապատի հերոսներուն յիշատակը ու արարողութիւնը աւարտած էր «Սարդարապատ» երգին մեղեդիով․ իսկ երեկոյեան, աշխարհ մուտքի մեր նշումը կը կնքուէր «Հայր Մեր»ով։ Ի՞նչպէս պէտք է մեկնաբանել երևոյթը․

Ի՞նչպէս պէտք է մեկնաբանել երևւդյբը. ժամանակը չէ՞ հասած տակաւին կրօնական համայնքի ու պետականութեան տէր ազգի իրավիճակներուն սահմանագիծը որոշելու եւ ընտրելու մեզի արժանին։

Չմտածուեցա՞ւ բնաւ թէ այդ «Հայր Մհր»ը հայկական նոր պետականութեան հանդէպ արհամարհանք պիտի նշանակէր․․․։

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ «ՅԱՌԱՋ» ՕՐԱԹԵՐԹԻՆ Ի ՓԱՐԻԶ

Педециј цирањи и Авд уругупули Педација и Педација и Педација 20 Гилји 1991 рређе и 1992 годи и 1994 годи и 199

Prunyξυ γζωνόμουλο βξ΄ βⁿλινι կամ βⁿλιμζα υρξωνδητείουλο υμουρ λιαδωάζη. ⁴αταξήλο μαιυμουλατεβριλ δη. Աγγόος պանգոής δη αμωζήλ δξ εζωιρ Մόρο όργδητείο απζόι ωτοβρⁿ գգաδητά δρ.....

Այն ատեն ի^տնչ տարբերութիեն կայ անաստըւած եւ դիկտատոր ռեժիմի մը եւ ժողովրդավարական իչխանութեան միջեւ։

ubp upp be maned quantumpundumpundum and υաւորըի լարլարանջներով եւ գարոգուβնամբը՝ մեր առաջելաշիմն Սկեղեցին վերածունցաւ հը-ւիրապետական Ս. Աթոռի ի Ս. Էջմիածին։ Ա Ump public pt propunden opput in mouth but np dbp 2mppbbpph dtg boffununun umph-" though month must be the minor the minor thopm--upa way any der by du du bit dep dann -uhu munify upper approximation of the second second fright bywb ellution sudup 301 Baruhubhb, Anterger Ubbe ne deter Superior by the big by Jbp Spawn Hugwinphi opni bi U. Aphanp Laiwywytu, ywphy zwparbuł wypud bię dbę twumungny bi «2mjp Ubpandp: Puppon pipughu կորսնցուցած ենք մեր թապաւորութիւնները, նաhunpurprished to be ununugar philipper unywyb n'z Jbp Uybybgfib bi fip Stpribulywb Unopper: 2mj bybybghb number 2mpnibut 5mj dagadarpath bruzhtige bywd t: Apadebah Jbp filmumnik Zuippunkenkepp bppbs szák

φπρωδ βρόδα ζβιωλη πιβωμε σουμεβ ωπηξ quijbb ζόσι»: Եւ մահաւահղ այսօր, մեր Հայբննիջը կ'ապբի իր ճղնաժամային օբերը եւ ժամերը։ Ոչ մէկ յոյս Սովետական իլխանուβնեն, ու ալ` Եւրոպայէն բացի մեր թագմայարյար Լուսաւորլի Աստուծմէն, եւ որջա'ն պէտք ունի «Անկոլ Հայր Մեր»ին, անոր գօրութեան եւ Տրայջին։

Φίνα έ աւևլցեեն βί Աղօβթը չի պարաապրուկը այլ՝ միայե մարդու մը սրտէ եւ ćոąht կրեայ որխիլ, իելպէս 8իտուս ալ այս Stpackuկuk Աղօβջը սորվեցուց իր աչակերտենpark խեդրաեցին վրայ (Ղկս. ԺԱ.2-4): Ուpark այսօր Հայրենիցի մէջ մեր ժողովուրդը սկսած է «Հայր Մեր» ըսել ամէն հաւաջոյնի կամ հահդիպումի աւարտին եւ հոյն ատեն հրաչէր մըն է մեցի՝ Սփիւռչահարուն մէջ, իելպէս ելը է մեցի՝ Սփիւռչահարուն մէջ, իելպէս «Հայր Մեր»ը երդեցինք կենքերս երեջ հայական ամէն գոյնի եւ հոսանցի պատկանող կուսակցական դէմջերու հերկայուննան։ Արդեօջ մե՞նչ այ շարհանորհաց և հոսակնցինը մեր նոր պես առութենան հանդեպ»։

վԱՉԷ Ծ. ՎՐԳ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

Umputy, 8 Antihu, 1991

P. U.POh

ՀԱՐՈԼՏԻ ՈՐԴԻՈՅՆ ՊԱՆԴԽՏՈՒԹԻԻՆԸ

- Ատա, սըրտիս, տանս միակ զաւակն ես դուն, Սիրուն դըստրիկս, է դէմքդ մօրդ դէմքին պէս, Վերջին հեղ ծաւի աչերըդ ժըպտուն
 Տեսայ, զատուեցանք բայց ոչ այժմ ինչպէս, Ապա յոյսով մը . . . Արթընցայ ցունցով մ՝ես։ Ջըրերն այժմ կ'ուռչին շուրջըս ու վերէն` Կը սուլեն ահա հովերն բարձրաձայն, Կը մեկնիմ բայց ո'ւր, ժամեր անցեր են, Երբ ինձ Ալպիոնի եզերքներն ցաւ, խինդ տալէ դադրեր են։
- Նորէն ջրերու վրայ, այ׳ո անգամ մ'ալ. Ներքեւս ալիքներ նըժոյգներու պէս` Տիրոջը ծանօթ ու կամակատար, Ուր կ'առաջնորդեն բայց չեմ գիտեր ես, Կ'ողջունեմ սակայն աղմուկն, կայմը վէս, Թէպէտ դողդըղայ ան որպէս եղէգ Բուքն առագաստը ընէ կտոր–պատառ, Ես ժայռէ մ' պոկուած զերթ սէզ մը անպէտք` Պիտ' երթամ ուր որ ալիքն զիս տանի հովերն բանան թեւք։
- 3) Կեանքիս գարունին բերթուած եմ հիւսած, Խափառ'շրջկի մ'տխուր մտածմանց մասին ես, Ձեռք կ'առնեմ նիւթն այն ատեն ըսկըսած. Հետս եմ բերած զայն-խուժող հովին պէս Ամպն առաջ մըղող-հոն կան սըրտակէզ Մտածման ակոսներ եւ արցունք չորցած, Որ կը թողուն հետք մ'ամուլ իմ սըրտես, Ուր անցնող դանդաղ տարիքներէն մնաց Աւազ, որուն մէջ ծաղիկ մ'անգամ դեռ չէ բուսած:
- 4) Պարման տարիքիս զգացումէն խինդ–ցաւի Թերեւս տաւիղս, սիրտս լար մը կորցրած ըլլան, Թերգել փորձեմ նոյն երգն` զոյգն այդ ցընցըւին, Ուրեմն զուր պիտի փորձեմ երգել զայն, Թեւ տըխուր անոր եմ կառչած սակայն, Որ անով փըրկուիմ մաշող երազէս Անձնական վըշտիս կամ ուրախութեան Մոռացութիւնով, անոր ուրեմն ես, Թեւ ուրիշ ոչ ոք, երախտապարտ եմ եւ գոհ այս նիւթէս։
- 5) Մեծցողը՝ ցաւի աշխարհին մէջ մեր, Որ ոչ տարիքով, արարքով մըտաւ Խորքերը կեանքին, զարմանք չըսպասեր, Ջի գիտէ ան թէ՝ սէր, վիշտ, ճիգ, համբաւ, Տենչ փառքի ալ չեն կարենար բընաւ, Սուր դանակով լուռ իր սիրտը ճեղքել. Գիտէ թ'ինչու միտքն կ'ուզէ քարանձաւ` Բազում հոգեղէն էութիւններով, Որոնք թէեւ հին, անզօր չեն, կ'ուզեն բնակիլ հոգեհմայից քով։

Թարգ. Մուրատ Մանուկեան

digitised by

Ս. Էջմիածնի Հոգեւոր Գերագոյն Խորհրուրդի Նոր Կազմը

Ամենայն Հայոց Հայրապետ Վազգէն Ա. հրապարակած է Հոգեւոր Գերագոյն Խորհուրդին նոր կազմը, որ Վեհափառին նախագահութեամբը բաղկացած է հետեւեալ անդամներէ.-

Երուսաղէմի Հայոց Պատրիարք ԹՈՐԳՈՄ Արքեպս. ՄԱՆՈՒԿԵԱՆ Պատուոյ Ատենապետ

Թուրքիոյ Հայոց Պատրիարք

ԳԱՐԵԳԻՆ Արքեպս. ԳԱԶԱՆՃԵԱՆ, Պատուոյ Ատենա– պետ

ՍԻՈՆ Արքեպս. ՄԱՆՈՒԿԵԱՆ, Ատենապետ, ՎԱՉԷ Արքեպս. ՅՈՎՍԷՓԵԱՆ (Առաջնորդ Ամերիկայի Արեւմտեան Թեմի), ՆԵՐՍԷՍ Արքեպս. ՊՈՉԱՊԱԼԵԱՆ,

Դիւանապետ Մայր Աթոռի), ԱՐՍԷՆ Եպս. ՊԷՐՊԷՐ-ԵԱՆ (Առաջնորդ Գուգարքի Թեմի), ԳՐԻԳՈՐԻՍ Եպս. ԲՈՒՆԻԱԹԵԱՆ (Առաջնորդ Շիրակի Թեմի), ՊԱՐԳԵՒ Եպս. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Առաջնորդ Արցախի Թեմի), ԳԱՐԵԳԻՆ Եպս. ՆԵՐՍԻՍԵԱՆ, (Առաջնորդական Փոխանորդ Արարատեան Թեմի), ԽԱԺԱԿ Եպս. ՊԱՐ-ՍԱՄԵԱՆ (Առաջնորդ Ամերիկայի Արեւելեան Թեմի), ԳՐԻԳՈՐ ԽԱՆՃԵԱՆ, ՊԻՈՆ ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ ՓԱՓԱՉԵԱՆ, ԱՐՄԷՆ ՓԱՓԱՉԵԱՆ։

ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱԻԱՔ ՆԻԻ ԵՈՐՔԻ ՄԷջ

Յունիս 17 – 21 շրջանին Պրոնըս, Նիւ Եորքի Քարտինըլ Սփելմըն Կեդրոնին մեջ տեղի ունեցաւ Հայ հոգեւորականներու միջազգային հաւաք՝ մասնակցութեամբ առաւել քան վաթսուն եկեղեցական հայրերու, որոնք եկած էին Հայաստանէն եւ այլեւայլ երկիրներէ։

Սոյն համագումարը` առաջինը իր տեսակին մէջ, առիթ ընծայեց որ հոգեւորակա– նութիւնը զիրար ճանչնայ։ Հաւաքին հրաւիրուած էին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ բոլոր Արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, վարդապետները, աբե– ղաները եւ քահանաները։ Նիստերու մասնակցող հայրերը արծարծեցին զանազան հրատապ հարցեր, որոնք կը ծառանան այսօր հայ հոգեւորականութեան առջեւ, ինչպէս հոգեւոր վերազարթօնքը Հայաստանի մէջ եւ ի սփիւռս աշխարհի, ծիսական բարեկարգութեան պահանջքը, դպրեվանքերու համար ուսումնական միակերպ ծրագրի մը մշակումը եւ երիտասարդութիւնն ու Եկեղեցին։

Հոգեւորականաց հաւաքը կազմակերպուած էր օրհնութեամբ Ն. Ս. Օծութիւն S. S. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի։ Վեհափառը գրով եւ բանիւ իր ուրախութիւնը յայտնած էր որ Եկեղեցւոյ իշխանները, այսինքն եպիսկոպոսները, եւ հոգեւորականները քով քովի պիտի գային Եկեղեցւոյ հին հայրերու նման` խորհրդակ– ցելու համար Եկեղեցին շահագրգռող լուրջ հարցերու մասին։

Հակառակ այն իրողութեան որ հոգեւորականաց հաւաքը խորհրդակցութեան բնոյթ ունէր քան թէ պաշտօնական նուիրապետական հանգամանք՝ Գերշ. Տ. Խաժակ Եպս. Պարսամեան, Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդը, իր բարեգալստեան խօսքին մէջ յայտնեց որ ժողովին մասնակցող հոգեւորականներ կրնային ընել առաջարկներ, թելադրութիւններ եւ նոյնիսկ առնել որոշումներ՝ Եկեղեցւոյ ապագայ ընթացքը յստա– կացնելու համար։

Հայ Եկեղեցւոյ նուիրապետական աթոռներեն իւրաքանչիւրը կը մասնակցէր հաւաքին ներկայացուցիչներով։ Մայր Աթոռեն ժամանած էին Գերշ. Տ. Պարգեւ Եպս. Մարտիտոսեան, Հոգշ. Տ. Աբրահամ Վրդ. Մկրտչեան եւ Հոգշ. Տ. Աբէլ Աբեղայ Օղլուգեան։ Երուսաղէմի Առաքելական Աթոռը կը ներկայացնէին Գերշ. Տ. Յակոբ Եպս. Վարդանեան, որ կը փոխարինէր Տ. Թորգոմ Պատրիարքը, եւ Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զղջանեան։ Իսկ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան, ներկայացուցիչներն էին Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Մութաֆեան եւ Արժշ. Տ. Գրիգոր Քհնյ. Տամատեան։ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը մերժած էր ռեւէ ներկայացուցիչ առաքելու։

Հոգեւորականաց հաւաքի կազմակերպման զօրավիգ կանգնեցաւ Հ. Բ. Ը. Միութեան Նախագահ Տիկին Լուիզ Սիմոն, որ հոգաց համագումարի բոլոր ծախքերը։

Ժողովական Հայրեր նախագահութեան պաշտօնին ընտրեցին Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արքեպս. Յովսէփեանը, իսկ նախագահութեան որպէս անդամ` Եգիպտոսի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Զաւէն Արքեպս. Չինչինեանը, Կեդր-Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Գրիգորեանը եւ Գերշ-Տ. Խաժակ Եպս. Պարսամեանը։

Վաչէ Սրբազան Հայրը իր զեկոյցին մէջ բազմաթիւ հարցեր ներկայացուց՝ ժողովի նիւթ դարձնելու համար։ Նիստերու միջոցին, ներկայ գտնուող տասնչորս եպիսկոպոս– ներ առանձին հանդիպումներ ունեցան խօսելու համար Եկեղեցւոյ նուիրապետութիւնը շահագրգռող այլեւայլ հարցերու մասին։

digitised by

Ժողովական հայրերը բաժնուեցան վեց խումբերու նկատի առնելու համար հետեւեալ հարցերը.–

. Պետութիւն եւ Եկեղեցի փոխ–յարաբերութիւնը՝ նախագահութեամբ Յունաստանի Առաջ– նորդ Գերշ. Տ. Ոսկան Եպս. Գալփագեանի։

. Քրիստոնէական դաստիարակութեան գործը Հայաստանի մէջ՝ նախագահութեամբ Գանատայի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Եպս. Տէրտէրեանի։

, Յարանուանութիւններ եւ աղանդներ՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Մու– թաֆեանի։

. Միութեան հարցը՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Զաւէն Արքեպս. Չինչինեանի։

. Երիտասարդական շարժումներ՝ նախագահութեամբ Աւստրալիոյ Առաջնորդ Գերշ. Տ. Աղան Եպս. Պալիօզեանի։

Իւրաքանչիւր խումբի նախագահը ընդհանուր հաւաքին ներկայացուց hp խմբակի ըրած առաջարկներն ու թելադրութիւնները որպէսզի կարծիքներու փոխանակութեան առիթ տրուի։ Ասոնցմէ զատ ներկայացուեցան նաեւ զանազան դասախօսութիւններ. –Պարգեւ եպս, խօսեցաւ «Ղարաբաղի այսօրուան հոգեւոր եւ քաղաքական կացութեան մասին», Հ. Աբրահամ Մկրտչեան՝ «Հոգեւոր վերազարթնումը Հայաստանի մէջ եւ Քրիստոնէական Քարողչական կեդրոնի գործունէութիւնը» նիւթին շուրջ, Մեսրոպ Եպս. Գրիգորեան՝ «Հոգեւոր վերազարթնումը Սփիւռքի մէջ» նիւթին շուրջ, Զաւէն Արքեպս. Չինչինեան՝ «Հայ հոգեւորականին դերը համայնքային կեանքին մէջ», Հ. Սասուն Վրդ. Զմրուխտ-«Երիտասարդութիւնը եւ Հայ Եկեղեցին» նիւթին շուրջ, Տ. Մեսրոպ Քինյ. Սաtwa` րաֆեան «Հայ Եկեղեցւոյ առաքելութիւնը եւ դերը» նիւթին շուրջ, Տ. Վազգէն Phuj. Մովսէսէան՝ «Թեընոլոժիք միջոցներու օգտագործումը փոխ-յարաբերութիւններ զարգացնելու համար», Հ. Եզնիկ Վրդ. Պալեան՝ «Դպրեվանքերու համար միաձեւ ծրագիր մը որդեգրել» նիւթին շուրջ։ Այս մասին արտայայտուեցան նաեւ Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զղջանեան՝ շեշտելով Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի պարագան, եւ Տ. Մարտիրոս Քինյ. Շեւեան՝ Ս. Ներսէս Աստուածաբանական Դարոցի կացութիւնը, եւ Հ. Աբէլ Աբդ. Օդլուգեան՝ Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանին մասին։ Արժ. Տ. Ներսէս Քինյ. Ներսէսեան խօսեցաւ հայկական աստուածաբանական հանդէսի մր կարելիութեան մասին։

Համագումարը ի մասնաւորի երկար ժամանակ տրամադրեց խօսելով յարանուանական եւ աղանդաւորական շարժումներու տարածման մասին Հայաստանի մէջ։ Հոգեւորականներ անհրաժեշտ տեսան որ Եկեղեցւոյ եւ Գթութիւն բարեգործական միութեան գործունէու– թիւնը համադրուի եւ Հայ ժողովուրդը հայրենիքի մէջ իր հոգեւոր սնունդը ստանայ ուղղակիօրէն Մայր Եկեղեցիէն։


Հոգեւորականաց հաւաքը որոշեց զօրավիգ կանգնիլ Հայ Քրիստոնէական Քարոզչու– թեան Կեդրոնին։ Անոր առաքուող օգնութիւնը պիտի տնօրինէ մասնաւոր յանձնախումբ մը, որուն կ'անդամակցին Տ. Յովնան Եպս., Տ. Գրիգոր Քհնյ. Հայրապետեան, Տ. Վրթանէս Ա. Քհնյ. Գալայնեան, Տ. Գարեգին Քհնյ. Գասպարեան եւ Տ. Մեսրոպ Քհնյ. Սարաֆեան։

Հայաստանի կառավարութեան ուղղուած նամակին մէջ, հաւաքի մասնակիցները բաղ– ձանք յայտնեցին որ Հայ Եկեղեցին պաշտօնապէս նկատուի Հայաստանի ազգային եկեղե– ցին։ Իւրաքանչիւր դասախօսութեան վերջաւորութեան եղան հարց–պատասխան։ Հաւաքը որոշեց աստուածաբանական հանդէս մը հրապարակել Տ. Ներսէս Քհնյ. Ներսէսեանի խմբագրութեան ներքեւ։

Ուրբաթ օրուայ նիստին ներկայ էր նաեւ Հ. Բ. Ը. Միութեան ցկեանս նախագահ Տիար Ալէք Մանուկեան, որ խօսը առաւ եւ հակիրճ ուղերձ մը ըրաւ։

Հայ հոգեւորականաց հաւաքի ատենագրութինը՝ հանդերձ դասախօսութիւններու բնագիրներով եւ յարակից այլեւայլ նիւթերով, պիտի հրատարակուի առանձին հատորով։

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ



ሀՒበՆ

Shihurgh

S. UPAU UPREQU. UUUAPHEUU (1906 - 1991)

Մեծ վիշտով իմացանք վախճանման լուրը Հայց. Եկեղեցւոյ ամենէն տարեց իշխա– նաւորին, որ տեղի ունեցած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ Յուլիս 16ին, 85–ամեայ տարիքի մէջ։

Հանգուցեալը, Միաբան Ս. Աթոռոյ, վերջինն էր Մեծ Եղեռնի տարագրութենէն վերապրած Վանեցի վարդապետներու սերունդին եւ վերջինը 1930–ին ձեռնադրուած ինը վարդապետներուն։

Ծնած է Կիրաշէն, Վան, 1906ին։ Տարագրութեան սարսափները ընտանեօք ճաշակած, ապա որբացած` հազարաւոր տարեկիցներու եւ բախտակիցներու հետ մտած է Արարատեան Որբանոցը, հասնելու համար Երուսաղէմ 1922ին, ուր երկու տարիներ ետք զինք կը գտնենը Ժառանգաւորաց Վարժարանի ուսանողութեան շարքին։

1926ին Դուրեան Պատրիարբէն կը ձեռնադրուի սարկաւագ, իսկ Ընծայարանի բաժինը աւարտելէն ետբ, 1930ի Յունիս 22ին՝ կուսակրօն աբեղայ, մեծանուն Պատրիարբի վախ– ճանումէն երկու ամիսներ ետբ։ Ձեռնադրիչ Պատր. Տեղապահ Տ. Մեսրոպ Արբեպս. Նշան– եան անոր Սարգիս անունը կը փոխէ Սիոնի, անունը նուիրական այն բարձունբին, որուն վրայ կոթողուած է Ս. Յակոբեանց Մայրավանբը։

Տարի մը ետք իր վարդապետական գաւազանը կ'ընդունի եւ կը դասաւանդէ Ժառան– գաւորաց եւ Ս. Թարգմանչաց Վարժարաններեն ներս։ Մինչեւ 1938, ատեն մը կը վարէ Կայուածոց Տեսչութիւնը, ապա կը մեկնի Միացեալ Նահանգներ։

40 երկար տարիներ, Սիոն վարդապետ (ապա եպիսկոպոս՝ 1945ին, ձեռնադրութիւնը ընդունելով նորընտիր Տ.Տ. Գէորգ Զ. Հայրապետեն) կը պաշտօնավարէ Ամերիկայի ute. նախ հովիւ Փրօվիտէնսի, Տիթրոյթի, ապա Նիւ Եօրքի շրջանին, յետոյ Առաջնորդական պաշտօնի կոչուելով Հարաւային Ամերիկա եւ, 1958–ին՝ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմին, մինչեւ 1966։ Այդ շրջանին Սիոն Սրբազան ունեցած է կազմակերպչական, վարչական ու գրական արդիւնաւէտ գործունէութիւն։ Արդէն իր եպիսկոպոսացման առիթով Հայրենիք մեկնած ատեն պատրաստած էր «Ամիս մը ի Հայրենիս» գործը, զոր հրատարակեց Ամերիկա։ Տարիներով վարած է խմբագրութինը Նիւ Եօրքի Առաջնորդարանի պաշտօնաթերթ "Հայաստանեայց Եկեղեցի"ի։ Իր գիրքերէն ամենէն ուշագրաւն է "Աւետարանի պատգամնե_ րը", ժողովածոյ մը բարոզներու, որուն երրորդ հատորն ալ, բիչ մը աւելի Ghhup. լոյս տեսաւ քանի մը տարիներ առաջ։ Իր աշխատութիւններէն յիշենը՝ "Քրիստոնէական Դաստիարակութիւն", "Քարոզգիրը", "Վանական Յուշեր", «Աւետարանի ճամբով»։ Իր գրութիններուն վերջին հատորը եղաւ "Խորհուրդ եւ Խօսը" աշխատութիւնը, տպուած touhudah uto:

Սիոն Սրբազան ծառայած է նաեւ որպէս Հայրապետական Պատուիրակ Եգիպտոսի, Սու– տանի եւ Եթովպիոյ։

Գործէ քաշուելէ ետը, յառաջացեալ տարիքին, Սիոն Արքեպս. գովելի մտածումը ունեցաւ տեղափոխուելու Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր գնաց 1978ին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւէրով դասեր ստանձնեց հոգեւոր ճեմարանի մէջ, ընտրուելով նաեւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ եւ ատենապետ։

1980ին Երուսաղէմ եկաւ եւ մասնակցեցաւ Միաբանութեան անդամներուն հաւաքին։ Իր ետին կը ձգէ վաստակաշատ ու նուիրեալ հոգեւորականի մը համբաւը։

"Սիոն", յանուն Ամեն. Ս. Պատրիարը Հօր եւ Ս. Յակոբեանց Միաբանութեան, յաւերժական հանգիստ կը հայցէ բազմարդիւն իր պաշտօնէի բարի հոգւոյն։

135



1991 Bnijhu - Ognusnu

ሀՒበՆ

Նորին Ամենապատուութիւն Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Երուսաղէմի

Խոր վշտով յայտնում ենք ձեզ որ Յուլիսի տասնըվեցին լոյս առաւօտեան բարեպաշ– տօրեն ու խաղաղ ի Տէր հանգիաւ Տէր Սիոն Արքեպիսկոպոս Մանուկեան։ Մայր Աթոռս սուգի մէջ է։ Հանգուցեալը մեր Սուրբ Եկեղեցում իր ամբողջ կեանքով նուիրուած, ուխտապահ ու անբասիր բարձրաստիճան հոգեւոր սպասաւոր էր որ հոգին աւանդեց իր պարտքը լիութեամբ կատարած Հայ Եկեղեցու եւ ժողովուրդի հանդէպ։ Թող Տէրը խաղա– ղութեամբ ընդունի նրա արդար հոգին երկնային յաւերժական խաղաղութեան աշխարհում։ Տէր Սիոն Արքեպիսկոպոսի անշնչացած մարմինը կ'ամփոփուի Սուրբ Գայանէի վանքում Հինգշաբթի 18 Յուլիսին։ Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։ Ամէն։

Վազգեն Առաջին Կաթողիկոս Ամենայն Հայոց

Երուսաղէմ, 17.7.91

Նորին Ս. Օծութին Տ.Տ. Վազգէն Առաջին Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց Ի Ս. Էջմիածին։

Compart Contractions and in the

Athuhun Stp.

Մեր եւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ցաւակցութիւնը կը յայտնենք Ձերդ վեհափառութեան Աստուծոյ նուիրեալ ծառային եւ մեր սիրեցեալ եղբօր Սիոն Սրբազանի վախճանումին առիթով։ Յուլիս քսանըմէկին Սուրբ Յարութիւն Տաճարին մէջ յընթացս սուրբ պատարագի հոգեհանգիստ պիտի կատարենը։

խոնարհաբար

Թորգոմ Արք. Մանուկեան Պատրիարք Երուսաղէմի 137

138

Նորին Ամենապատուութիւն Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Երուսաղէմի

Ծանր վշտով յայտնում ենք ձեզ որ Յուլիսի վեցին զինեալ Օմօնականներ յարձակում գործած են Արցախում Գանձասարի պատմական Վանքի վրայ, ահաբեկած են եկեղեցու աշխատաւորներին եւ տապալած են Վանքի շրջափակում գտնուող Ղարապաղի Հայ իշխանների հնադարեան գերեզմանաքարերը, զենք փնտռելու պատրուակով։ Այս անօրեն սրբապղծութեան մասին մեր բողոքի խօսքը ուղարկած ենք Մոսկուա պետական բարձր մարմիններին եւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին։ Առ Աստուած աղօթեցէք մեր տանջահար ժողովրդի փրկութեան ու խաղաղութեան համար։

Վազգեն Առաջին Կաթողիկոս Ամենայն Հայոց

UOUL ULBRUNES AUUEPEUU

1989ի վերջին օրերուն կը վախճաներ Ս. Աթոռոյս վերջին մայրապետը։ Իսկ 1990ի ընթացքին Ս. Քաղաք կը ժամաներ Սօնա Վաներեան, փափաք յայտնելով որ ընդունուի Վանուցս Մայրապետաց շարքեն ներս։ Իր խնդրանքը ընդունուած ըլլալով, Ծաբաթ, 31 Օգոստոսի առաւօտուն, Ս. Պատարագի սկզբնաւորութեան, ան մասնաւոր օրհնութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր ձեռքեն կ'ընդուներ Մայրապետական քօղն ու զգեստը։

Սօնա Մայրապետ ծնած է Սայտա (Լիբանան) 2 Հոկտ. 1942ին։

20 Օգոստոս 1990ին եկած է Երուսաղէմ։

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Եկեղեցականք_Բեմականք

Ուր. 5 Յուլիս.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

Ծբ. 6 Յուլիս.– ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՌԱՔԵ– ԼՈՖՆ ՔՐԻՍՏՈՍԻ։ Ս. Պատարազը մատուց– ուեցաւ Մայր Տաճարի Ս. Պօղոսի վեր– նամատրան մեջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Աբղ. Պուրնեքեան։

Կիր. 7 Յուլիս.– ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՎԱՐ– ԴԱՎԱՌԻ ՊԱՀՈՑ։ Ս. Պատարագը մատուց– ուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնա– մատրան մեջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զղջանեան։ Քարոզեց Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

Ուր. 1Ձ Յուլիս.– Նախատօնակը մա– տուցուեցաւ Մայր Տանարի Ս. Էջմիածին մատրան մէջ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

Շբ. 13 Յուլիս.– ՅԻՇԱՏԱԿ ՏԱՊԱՆԱ– ԿԻՆ։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռու– բէն Վրդ. Յովակիմեան։

- Կեսօրէ ետը, Ամեն. Ս. Պատրիարը Հայրը "Հրաշափառ"ով ปีกะเทอ qnnðbg Տանար, ուր Մայր Այլակերպութեան մեծահանդէս նախատօնակին եւ անոր Stundinpop յաջորդող Գահակալութեան տարեդարձի հանդիսութեան նախագահելէ ետը, թափօրով – Ս. Աթոռոյ մաղթերգ "Օրհնեցէք զՏէր"ի երգեցողութեամբ – բարձրացաւ Պատրիարքարան։

– Իրիկնադէմին, Մայր Տանարին մէջ պաշտուած "Եկեսցէ"ի եւ Հսկման կարգե– րուն Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

Կիր. 14 Յուլիս.– ՎԱՐԴԱՎԱՌ (ՏՕՆ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ)։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարազը՝ Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Ամեն. Ս. Պատրիարը Հայրը։

– Կէսօրէ ետբ, Մայր Տանարին մէջ կատարուած "Անդաստան"ին Նախազահեց Գերշ. Տ. Սեւան Եպս.։

Բ2. 15 Յուլիս.– ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵ– ԼՈՑ։ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Հոզշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան։ Ամեն. Ս. Պատրիարը Հայրը նախագահեց հոգեհանգստեան պաշտամուն– քին։ Ուր. 19 Յուլիս.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Սեւան Եպս.։

Ծբ. ՉՕ Յուլիս.– Ս. ԹԱԴԷՈՍԻ ԱՌԱ– ՔԵԼՈՅՆ ԵՒ ՍԱՆԴԽՏՈՅ ԿՈՒՍԻՆ։ Ս. Պատա– րազը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոզշ. Տ. Կոմիտաս Վրդ. Ծէրպէթնեան։

Կիր. Ձ1 Յուլիս.– Ս. Պատար մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Պատարագր մեո վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի Միաբան Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Դանիէլեան, որ Ամերիկայեն հիւրաբար կը գտնուէր U. Աթոռ։ Հոգշ. Հայրը քարոզեց, անդրադառնալով երէկուան Թադէոս առաքեալի եւ Սանդուխտ կոյսի տօնին։ Գերշ. Տ. Սեւան Եպս. կարդաց կենսագրութիւնը Ս. էջմիածնայ մէջ վերջերս վախնանած Սիոն Արքեպս.Մանուկեանի եւ նախագահեց անոր հոգւոյն համար կատարուած հոգեհան– գրստեան պաշտամունթին։

Շբ. 27 Յուլիս.– Ս. ՈՐԴԻՈՑ ԵՒ ԹՈՌԱՆՑ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԻՈՐՉԻՆ։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան վրդ. Ալնանեան։

Կիր. 28 Յուլիս.– Ս. Պատարազը մատուցուեցաւ քաղաքիս արեւմտեան բաժ– նին մէջ գտնուող Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։ Ժամարարն էր Հոզշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան։ Քարոզեց Հոզշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղջանեան։

Շբ. 3 Օգստ.– Ս. Պատարազը մատուց– ուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոզշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։ Կիր. 4 Օգստ.– Ս. Պատարազը մա– տուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատրան մէջ։ Ժամարարն էր Հոզշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զղջան– եան։ Քարոզեց Հոզշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօդոսեան։

Ծբ. 10 Օգստ.– ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ԱԹԱ– ՆԱԱԻ ԵՒ ԿԻԻՐԵՂԻ, ԵՒ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻՆ։ Ս. Պատարազը մատու– ցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոզշ. Տ. Կոմիտաս Վրդ. Ծէրպէթնեան։

Կիր. 11 Օգստ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոզշ. Տ. Մեսրոպ Վրդ. Ասողլեան, որ նաե, քարոզեց։ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. նախագահեց «Խաղողօրհնէք»ի արարողու– թեան։ 140

Բշ. 12 Օգստ.– Այսօր սկսան Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը կանխող կէս–հանդիսաւոր պատարազները` Գեթսե– մանիի Ս. Աստուածածնայ Տանարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։

Ծբ. 17 Օգստ.– ԵՓԵՍՈՍԻ Ս. ԺՈՂՈ– ՎՈՅՆ (431)։ Ս. Պատարազը մատուցուե– ցաւ ի Ս. Աստուածածին։ Ժամարարն էր Հոզշ. Տ. Աւետիս Աբղ. Իփրանեան։

Կիր. 18 Օգստ.– ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՊԱՀՈ3։ Ս. Պատարագը մա– տուցուեցաւ ի Ս. Աստուածածին։ Ժամա– րարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալնա– նեան։ Քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

Ուր. 23 Օգստ.– Նախատօնակը պաշ– տուեցաւ Մայր Տանարին կից՝ Ս. էջմի– ածին մատրան մէջ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան։

Շբ. 24 Օգստ. ՏՕՆ ՇՈՂԱԿԱԹԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ։ Ս. Պատաազը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովհակիմեան։

– Կէսօրէ ետը, Ամեն. Ս. Պատրիարը Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժով մեկնեցաւ Գեթսեմանիի ձորը ու * Հրաշափառ*ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տանար, ուր Ն. Ամեն. նախագահեց Վերափոխման մեծահանդէս նախատօնակին։

– Գիշերասկիզբին, նոյն Տանարին մէջ պաշտուած "Եկեսցէ"ի եւ ՀՍԿՄԱՆ կարգերուն նախահգահեց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան։

4hp. 25 Oqum.-ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ U. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ։ Առաւօտեան, դարձեայ Ամեն. Ս. Պատրիարը Zon qlumruburթեամբ, Միաբանութիւնը ինընաշարժերով մեկնեցաւ Գեթսեմանիի ձորը ու «Հրա– շափառ"ով մուտք զործեց Ս. Աստուա– ծածնայ Տանար, ուր Տիրամօր Ս. Գերեցմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ բարոզեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան։ Ապա տեղի ունեցաւ "Անդաստան"։

– Կէսօրէ ետը, Մայր Տանարին մէջ պաշտուած Նախատօնակին նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։

Բշ. 26 Օգստ.- 3ԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ։ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մեջ պատարագեց Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Ծերպեթնեան։ Հոգեհանգստեան կարզին նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս։ Նոյնը կրկնուեցաւ զաւիթը՝ երանաշնորի Տ. Կիւրեղ Բ. Պտրը. Հօր շիրիմին վրայ։

Գշ. 27 Օգստ.– Գիշերուան ժամը 2.30ին, Միաբան Հայրեր եւ ժողովուրդ իջան Գեթսեմանիի ձորը, ուր Տիրամօր

digitised by

Ս. Գերեզմանին վրայ պատարագեց Հոզշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթնեան։ Քարողեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.։ Կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Ս. Աստուածածնայ Տանարի հանգուցեալ Տեսուչներու եւ Լուսարարներու հոզի– ներուն համար։

Ծբ. 31 Օգստ.– Է. ՕԲ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ։ Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տանարի Ս. Ածածնայ խորանին վրայ։ Ժամարաըրն էր Հոզշ. Տ. Գրիգոր Վրդ. Մագսուտեան։

Պաշտօնականք

Եշ. 4 Յուլիս.– Երեկոյեան, Ամե– րիկայի Միացեալ Նահանգաց Անկախութեան Ջ15րդ տարեդարձին առիթով, Ամերիկեան Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսա– րանի պարտէզին մէջ տրուած ընդունե– լութեան ներկայ եղաւ Ամեն. Ս. Պատ– րիարք Հայրը, հետն ունենալով Լուսա– րապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.ը, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.ը եւ Աւագ Թարգման Հոզշ. Տ. Ռազմիկ Վրդ.ը։

կիր. 14 Յուլիս.-Երեկոյեան, Ֆրանսական Յեղափոխութեան 202րդ տարե_ դարձին առիթով, Ֆրանսական Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի պարտէ_ զին մեջ տրուած ընդունելութեան ներ-կայ եղաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով Լուսարարապետ 9-4p2-Տ. Դաւիթ Եպս.ը, Գերշ. S. կիլըեղ Եպս.ը, Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ.ը եւ Քարտուղար Տիար Գէորգ Հինդըլեանը։

Բշ. 15 Յուլիս.– Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. մեկնեցաւ Ֆրանսա, միամսեայ արձակուրդով։ Այդ միջոցին Լուսարարապետի պաշտօնը առժամաբար վարեց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեանը։

Բշ. 26 Օգստ.– Կէսօրէ առաջ, Ամե– րիկեան նոր դեսպան՝ Mr. Molliyc Williamson այցելեց Պատրիարբարան։

Բ2. Օգստ.- Երեկոյեան, Swedish Christian Studies սրահին մէջ Առաջին աշխարհամարտի Ս. Քաղաքի կացութեան մասին տրուած բանախօսութեան ներկայ եղան Հոզշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոզշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ., Հոզշ. Տ. Բարսեղ Վրդ., Հոզշ. Տ. Ռազմիկ Վրդ. եւ Տիար Գէորգ Հինդլեան։

Դշ. 28 Օգստ.– Ս. Աթոռ ժամանեց Ս. Աթոռոյս Միաբան վարդապետներէն Հոզշ. Տ. Գրիգոր Վրդ. Մազսուտեան։ Իր հետ ժամանեցին չորս երիտասարդներ, որոնք պիտի աշակերտին մեր Ընծայարանին, պատրաստուելու համար բահանայութեան սրբազան ասպարէզին։

Ս. ԱԹՈՌՈՅՍ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ Է ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1)	ԴԷՊԻ ՔՍԱՆՄԷԿԵՐՈՐԴ ԴԱՐ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ
		Ալպեռ Նորատունկեան։ Թորոնթօ, 1991 էջ 20։
2	2)	բևրի ծջնիկն նի ՊԱՐԿԱՊՋնիկը
		Յուրի Սահակյան։ Բանաստեղծություններ։ Երեւան, "Արեւիկ" 1990 էջ 98։
110	5)	ԱՌԱՆՑ ԴԷՄՔԻ ՁԻԱԻՈՐՆԵՐ
		Ծուշան Ֆանուս-Պարտիզպանեան։ Փասատինա, Տպագրթ. Print-X-press, 1990 էջ 134։
4	1)	ՀԱՅՈՍ ԵՒ ՔԱՐԹԼՈՍ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ։
		Տիգրան Ա. Կարապետյան։ Երեւան, "ԼՈՒՅՍ" 1990 էջ 242։
4	5)	ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՒԾԱՄԱՏԵԱՆ Ս. ԹԱԳԱՒՈՐ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ 1938-1988։
		Տորթ. Իզնա Սարըասլան։ Իսթանպուլ, Մուրատ Օֆսէթ, 1990 էջ 139։
(5)	ህበቦት3 ዋሪያ 265:
		Էտուարտ Ա. Մեհրաբեան։ Երեւան, "Պարբերական" 1990 էջ 209։
1	7)	ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ։
		Երեւան, Երեւանի Համալսարանի հրատարակչություն, 1990 էջ 109։
5	3)	թեղծևների ՇԱՐՈՒՆԱԿՈՂ
		Բյուզանդական Աղբյուրներ – Ե.– Հրաչ Բարթիկյան (թարգմանիչ)։ Երեւան, Հայկա–
		կան ԽՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1990 էջ 438։ ՏՈՒՄԱՐ ԱՐԵԳԱԿԱՆ ԵՒ ԼՈՒՍՆԻ
-	9)	
		Եսայի Ղրիմեցի։ Աշխատասիրությամբ՝ Ջ. Ա. Էյնաթյանի։ Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1990 էջ 115։
	101	Հրատարավչություն, 1990 էջ 113։ ՀԱՅԿԱԾԵՆ
	10)	Չօրի Բալայան։ Երեւան, "Արեւիկ" 1990 էջ 415։
	11)	ՓԻՍԻԿՆԵՐԸ ՀԱՂԹԵՑԻՆ
	,	Օլգա Սանահյան։ Վիպակ։ Երեւան, "Արեւիկ" 1990 էջ 71
	12)	ողբերգրվան Չորենջը
)	Դաւիթ Գասպարյան։ Երեւան, "Նաիրի" 1990 էջ 382։
	13)	ՁՆԾԱՂԻԿՈԵՐ
		Սարո Գյոթակյան։ Բանաստեղծություններ, հերիաթներ։ Երեւան, "Արեւիկ" 1990 էջ 75
	14)	2004
		Պաշտօնական Ամսաթերթ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան։ Ա.–Ե. Տարիներ։
		1932-1937: Ulphihuu, 1990:
	15)	ԱՆԳԵՏԻԿԻ ԵՒ ՆՐԱ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ։
		Նիկոլայ Նոսով։ Հերիաթ-վիպակ։ Թարգմանեց՝ Սօնա Այունց։ Երեւան, "Արեւիկ" 1989
		tg 132:
	16)	ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐՄԱՇՈՒ
		Միքայէլ Ա. Քինյ. Երամեան։ Հրատարակեց՝ Բաբգեն Թօփնեան։ Երեւան, 1991 էջ 70։
	17)	250000405060
		Սուրեն Սահակյան։ Գեղարուեստական Զրույցներ։ Երեւան, "Արեւիկ" 1990 էջ 350։
	18)	ԴԻՄԱԿՆԵՐ ՀԱՐԻԻՐԱՄԵԱՅ Հ.Յ.Դ.Ի
		3. ԳԵՂԱՐԴ։ Ֆրէզնօ, Տպարան Մշակ, 1991 էջ 48։
	19)	ՄԵԾ ԾՈՎԱՆԿԱՐԻՉԻ ԿԵԱՆՔԸ
		Մինաս Սարգսյան։ Երեւան, "Անահիտ" 1990 էջ 480
	20)	UPU35 UE4 JUU
	211	Վարդան Զօրենց։ Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1987 էջ 67
	21)	LUGANN WUSH AN LUGAN SUL
	222	Վարդան Զօրենց։ Վիեննա, Մխիթարեան Տպարան էջ 57։
	22)	ԳԱԲՐԻԷԼ ՏԵՐ–ՄԻՔԵԼՅԱՆ Էդմոնդ Տիգրանյան։ Երեւան, "Սովետական Գրող" Հրատարակչություն, 1981 էջ 88։
	221	Հդմոնդ Տիգրանյան։ Երեւան, Սովետական Գրով Հրատարակչություն, 1901 է 2003 ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ–ԱՆՀՐԱԺԵ*ԾՏ
	23)	Վարդան Զօրենց։ Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1991 էջ 65։
		amhtma soload: aleana, olabhalana oalalana, isia as

digitised by

141

	The second se
24)	ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ Գիրք Առաջին։ Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1961 էջ 388
25)	a an an an a a a a a a a a a a a a a a
	2. Unhumuhtu dna. Mohamiamu: Chanama, Omphamama odamama, 1991 (g 52:
26)	
	Առասի։ Եռեւան, "Սովետական Գրող" Հրատարավչություն, 1961 էջ 555.
27)	ԾԻՐՎԱՆՁԱԴԵՒ ԷՍԹԵՏԻԿԱՆ ԾԻՐՎԱՆՁԱԴԵՒ ԷՍԹԵՏԻԿԱՆ Ստեփան Է. Թոփճյան։ Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1963 էջ 194։
	(1953 - 1903)
201	1970 - 1980 P (0.000) (0.00
	որողորագրություն, որու հարարան հարարակերություն, որոշ էն հերե
30)	$\Delta = \Delta =$
	Ithmuti h. Tuhundhs: Bracuut, "Zujuumuu" Zhumuhudzackjaca, 1979 cg 550.
31)	muchounds, S. 60 0h05 h0h If HUP's:
1	լեւոն Խալաթյան։ Երեւան, Հայկական Թատերական Ընկերություն, 1989 էջ 331։
32)	ระจานง บนงบกะกรมง
	Կոմպոզիտոր։ Երեւան, 1984 էջ 28։ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԻՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆԸ
33)	ՀԱՏԿԱԿԱՆ ՍՈՐ ԳԻՅՈՒԵՅՈՒՅՅՈՒՅՅՅՈՒ ԱՆԱԴ ԳԱ Հրատարակչություն, 1956 էջ 64։ Լյուդվիգ Վ. Միրզոյան։ Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1956 էջ 64։
34)	ԵրևժԾՏՈՒԹՅՈՒՆ ՓՈՂԱՅԻՆ ՆՈՒԱԳԱԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ
54)	կազմեց եւ հրատարակեց Համլետ Պօդոսյան։
	Երեւան, "Սովետական Գրող" Հրատարակչություն, 1985 էջ 228։
35)	ՄԻՆԱՍ ԱԻԵՏԻՍՅԱՆ
	Կազմեց Գոհար Խոստիկեան։ Կատալոգ։ Երեւան, 1968 էջ 77
36)	ԿԻՐՈՎԱԿԱՆ Կոզմո Ս. Կոզմոյան։ Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1960 էջ 294
271	կոզմո Ս. Կոզմոյան։ Երեւան, Հայկական ՍԵՌ ԳԱ Հրատարակչություն, 1900 էջ ՀԵԴ ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹԻՒՆՅԱՆ
31)	Սուրեն Սահակյան։ Երեւան, "Սովետական Գրող" Հրատարակչություն, 1985 էջ 186։
38)	ԱՄՈՒՐ ՁԵՌՔԸ- ԳԱՄԲՈՒՍԻՆՈ
50)	Գուստավ Էմար։ Երեւան, "Սովետական Գրող" Հրատարակչություն, 1983 էջ 598։
39)	ወበኮቦዳኮ ԱԽՉኮԿԸ
1000	Խաչատուր Աբովյան։ Երեւան, "Լույս" Հրատարակչություն, 1984 էջ 28
40)	ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ Կազմեց եւ խմբացրեց Գուրցեն Յովնան։ Երեւան, "Սովետական գրող" Հրատարակ-
	and and an lankading webden withen the term to the term
41)	չություն։ 1978 էջ 287։ ՔՆԱՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ
41)	կայծակ Լեփենեան։ Բանաստեղծութիւններ։ 1991 էջ 193։
42)	ԲԻՒՐԱԿԱՆՅԱՆ ՄԻՋՕՐԵԱԿԱՆ
	Աշոտ Արզումանյան։ Վարք Մեծաց – Վիկտոր Համբարձումյան։ Երեւան "Արեւիկ" 1990
	tg 191
43)	ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ։
	Խորէն Մեխանէնեան։ Սուրբ Էջմիածին, 1985 էջ 92։
44) ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ
45	Սերգեյ Մելզումյան։ Երեւան, "Լույս" 1990 էջ 303) Ո³ՒՐ, ՎԱՀՐԱՄ
	Յակոբ Յ. Ասատուրեան։ Թէնըֆլայ, Նիւ Ճրրսի, 1990 էջ 275։
46) ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՐԱՆ
	Արտեմ Սարգսյան։ Երեւան, "Արեւիկ" 1991 էջ 219
47) ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԱՃԻ ՀԱՊԻՊԻ ԳԻԻՂԸ
1	Եզնիկ Ծիրկաթին։ Երուսաղէմ, Սրբոց Յակոբեանց Տպարան, 1991 էջ 111
48) 5207005 URU455PC
40	Երեւան, "Հայաստան" 1990 էջ 381) ԲԱՑ ՆԱՄԱԿ Ζ-ԻՆ
49	Հովհաննես Քաջազնունի։ Երեւան, "Հայաստան" 1990 էջ 47
	antinance i aladancali oliacaia, callangian 1330 (5 4)

142

digitised by

1991 Bnilhu - Ognusnu

50)	ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՆԻՇ Սպարտակ Ղազարյան(կազմող)
==>	Երեւան, Հայկական ՍՍՀ Գրրասերների բնիերություն, 1984 եր 208
51)	ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱԿՆԵՐԸ Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեան։ Նիւ Եորը, Ս. Վարդան Մատենաշար, 1991 էջ 229
52)	UUL IN
53)	Քրիստինէ Գույումնեան։ Նորավէպ։ Մոնթրէալ, Տպգրթն. Ա. Մանավեան, 1990 էջ 121 ՎԱՐՈՒԺԱՆԸ
55)	Քրիստինէ Գույումնեան։ Մոնթրէալ, Տպ. MKO Litho, Inc. 1990 էջ 226
54)	DEDR05
	Irene Rudolf. A Historical Novel. Garnerville, New York, Hyst'ry Myst'ry House 1983 pp. 297
55)	WARSAW VISITOR AND TALES FROM VIENNA STREETS
	1991 pp. 212 Fresno, The press at California State University, Fresno
56)	TEACHING ABOUT GENOCIDE
	The official Journal of Natioanal Council for the Social Studies
57)	Volume 55 - No. 2 - Febr. 1991. Washington, D.C pp. 71-144 THE LAND AND THE PEOPLE OF TURKEY
.,	William Spencer. Portraits of the Nations New York IB Lingingett
	Junior Books, 1990 pp. 208
58)	ONE JERUSALEM IS NOT ENOUGH (A Drama in Six Acts)
59)	Noble J. Nassar. Brooklyn, New York, Smyrna Press, 1983 pp. 42 TOUSISRT ATTRACTIONS IN ARMENIA (Transcaucasia)
.,	Rem Ananikian. Moscow, Planeta Publishers, 1989 pp.207
60)	ARMENIA THROUGH POSTAGE STAMPS
	Hovhannes-Sarkis Aghabatian. Athens, Stochastis Editions, 1989 pp. 135
61)	THE ANCIENT GODS
62)	Levon Shant. University of La Verne Press, 1987 pp. 156 CATHOLICOS VASKEN I
	Gerhard Bassarak. Berlin, Union Verlag, 1983 pp. 36
63)	ALLAHU AKBAR
(1)	EDWARD NASH. BROOKLYN, NY, Smyrna press, 1988 pp. 498
64)	LA CUESTION ARMENIA Y LAS RELACTIONES INTERNACIONALES
	Pascual C. Ohanian. Tomo I - (1839-1896) - 1975 pp. 465 Tomo II -(1897-1914) - 1982 pp. 537
	Buenos Aires, Argentina
65)	TOO MUCH TOO SOON
	Betty Ballam. A portrait of Iran from 1967 until the fall of the Shah
	Florida, Loiry Publishing House, 1987 pp. 196
(Tu)	րունակելի)

Սահակ Գալայնեան Քարտուղար Կիւլպէնկեան Մատենադարանի

<u> Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն</u>

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ	The operation of the second states of the second st	
— Ազգապանպոնման խնդոոյն առթիւ	P. U. 9.	112
ԿՐՕՆԱԿԱՆ		
— Պայծառակեւպութիւն	P. U. U.	118
— Խաչակցութիւն ընդ Քբիսsոսի	սՆՈՒՇԱՒԱՆ ՎՐԳ․ ԳԱՆԻԷԼԵԱՆ	120
ՊԱՑՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԲ		
— Գամագոական	ԶԵՆՈԲ ՔՀՆՑ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ	122
— Վեւանուոգութիւն Ս․ Յաւութեան Տանաւի	ԿԻՒՐԵՂ ԵՊՍ․ ԳԱԲԻԿԵԱՆ	125
— Օւագւութիւն Մեսւոպ Վւդ. Նշանեանի		127
Օւն Օւին	ՎԱՉԷ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ	129
Հաւօլչի Ուղւոյն Պանդխչութիւնը (քեւթուած)	Թոգմ. ՄՈՒՐԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ	130
Ս. Էջմիածնի Գեռագոյն Հոգեւու Խունոււդի նու	կազմը	131
Հայ Հոգեւուականաց ճաւաք Նիւ Եուքի մեջ		132
Ցերորչե		
— Տ. Սիոն Ա ւ քեպս. Մանուկեան		135
Հեռագիր Վենափառեն		137
Հեռագիր Վեճափառին		137
Հեռագիբ Արցախի մասին		138
"օնա Մայրապետ Վաներեան		138
Ս․ ՅԱԿՈՌԻ ՆԵՐՍԷՆ		
— Եկեղեցականք–Բեմականք		139
— Պաշոօնականք		140
8անկ՝ Կիւլպենկեան Մաշենադաշանի կողմե սշաց	ncuð grfbrni	141

ուրութի ԱԴԱՐԱՆ ԱԴԱԺԻՆ